Ազգ
Azg
5 ՄԱՐՏ 2011 ՇԱԲԱԹ 39(4658)
ISSN: 1829-1651

# Զոհվել է հայ զինծառայող

Երեկ՝ ժամը 14:30-ի սահմաններում, ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսարեւելյան (Վերին Չայլու) ուղղությամբ հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի հերթական խախտման հետեւանքով հայ զինվոր է զոհվել: Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի լրատվության եւ քարոզչության բաժնից հայտնում են, որ զոհվել է ժամկետային զինծառայող, 1991 թ. ծնված Գրիգոր Արամի Շախկանյանը:

# Եվրոմիությունը Մինսկի խմբի դերի հավակնություն չունի

**Եվրոմիությունը չի հավակնում ԵԱՀԿ Մինսկի խմբի դերին, բայց, միեւնույն ժամանակ, դա չի նշանակում, թե Եվրոմիությունը պետք է մի կողմ քաշվի: Իր առաքելությունը որպես Հարավային Կովկասում Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ ավարտին հասցրած Պիտեր Սեմնեբիի ներկայացմամբ՝ հենց այսպիսին է իրավիճակը ղարաբաղյան հակամարտության՝ որեւէ այլ ատյան քննարկումների տեղափոխման առնչությամբ:**

**Ըստ ադրբեջանական «News.az» կայքէջին տված հարցազրույցի, Սեմնեբին նշել է, թե Եվրոմիությունը տնօրինում է հնարավորություններ, որպեսզի հակամարտության կարգավորման գործում օգնություն եւ աջակցություն ցուցաբերի իր գործընկերներին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին: «Մենք պետք է աջակցենք հակամարտության կարգավորման գործընթացին», ասել է եվրոպացի դիվանագետը:**

**Սեմնեբին նաեւ հույս է հայտնել, թե, հնարավոր է, որ մոտ ապագայում ձեռնարկվեն կարգավորման ուղղությամբ նշանակալի քայլեր, միեւնույն ժամանակ նշելով, որ մինչեւ վերջնական որոշում դեռեւս անելիքները շատ են: ԵՄ Հարավային Կովկասում հատուկ ներկայացուցիչն ընդգծել է, որ Եվրոմիությունը շահագրգռված է Հարավային Կովկասի կայունությամբ, ինչի մասին է վկայում նաեւ ԵՄ հարաբերությունների զարգացումը հարավկովկասյան երկրների հետ:**

Ա. Հ.

# ԱՄՆ-ը եւս մեկ անգամ կրկնում է՝ հատուկ Ադրբեջանի ու Թուրքիայի համար

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը որեւէ կերպ եւ որեւէ այլ ատյանում կամ կազմակերպությունում քննարկման թեմա դարձնելու ադրբեջանական նկրտումները քանիցս բախվում են հստակ ու միանշանակ հայտարարությունների այն առնչությամբ, որ բանակցությունների գործող ձեւաչափը միանգամայն ընդունելի է եւ առայժմ միակը:



Այս նույն տեսակետն է ամեն առիթով հայտնում նաեւ Հայաստանը այն դեպքում, երբ Ադրբեջանին դժվարահաս են այս մասին արվող բոլոր տեսակի հայտարարությունները. այս երկիրը շարունակում է այնպես, կարծես աշխարհում բացի իրենից եւ Ադրբեջանի բնակչությունից՝ էլ չկա մեկը, որին դա կարող է վերաբերել:

ԱՄՆ-ը կարծում է, որ Մինսկի խումբը շատ լավ է աշխատում: ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնական Ֆիլիպ Գորդոնի այսպիսի պատասխանը հաստատապես մեկ հասցեատեր ունի՝ Ադրբեջանը, հավաստիացնելու, որ այդ ձեւաչափը լիովին ընդունելի ու բավարար է: Գորդոնն իր՝ Բրատիսլավայում այս օրերին անցկացվող միջազգային անվտանգության Globsec (Global Security) 2011 գիտաժողովում ունեցած ելույթից հետո այդպիսի պատասխանով է արձագանքել ադրբեջանցի մասնակիցներից մեկի հարցին: Վերջինս իր հիասթափությունն է հայտնել, թե իբր Մինսկի խումբը որեւէ արդյունք չի տալիս, եւ հարցրել, թե արդյոք չկա՞ն բանակցային այլընտրանքային ուղիներ:

Գորդոնի խոսքով, ղարաբաղյան հակամարտությունը համարվում է սառեցված, բայց շփման գծում տեղի են ունենում միջադեպեր, որոնցից կան զոհեր: Ընդ որում, ամերիկացի դիվանագետը ընդգծել է, որ կա հավանականություն «ինչ-որ սխալ հաշվարկների հետեւանքով հակամարտությունը սառից տաքի վերածվելու», բայց նման սցենարը պետք է կանխվի: Այս խոսքերը եւս վերաբերում են Ադրբեջանի ղեկավարությանը, որոնց տաք գլուխների «սխալ հաշվարկները» արտահայտվում են հենց ռազմատենչ հայտարարություններով:

*Տես էջ 2*

# Բանը հասցրին հիմարության

«Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքը» Բաքվում «պաշտոնական կայքէջի շնորհանդես է» կազմակերպել: Իլհամ Ալիեւի աշխատակազմում քարոզչության հարցերով պատասխանատու Էլնուր Ասլանովն էլ ասել է, թե փաստը, որ «կայքէջի նյութերը ներկայացվում են նաեւ հայերեն, վկայում է Ադրբեջանի հանդուրժողականության մասին»:

Փաստորեն ադրբեջանական կողմն ընտրել է քարոզչական «պատերազմը» նաեւ հայերենով ծավալելու մարտավարություն, որը, սակայն, իշխանության ներկայացուցիչը համարում է «հանդուրժողականություն»: Ստացվում է, որ հայերը պետք է «երախտապարտ լինեն», որ Ադրբեջանը հիմա էլ Արցախի պատմությունն ու ներկան խեղաթյուրում է հայերենով:

Որպեսզի պարզ լինի, թե ինչ «հայերենի» մասին է խոսքը, մի մեջբերում անենք. «Ղարաբաղը հանդիսանում է Ադրբեջանի հնագույն բնակավայրերից մեկը: Ղարաբաղի անունը, որը համարվում է Ադրբեջանի անբաժանելի մասը, բաղկացած է երկու մասից՝ ադրբեջանական «Ղարա» (սեւ) եւ «բաղ» (այգի) բառերից: «Ղարա» եւ «բաղ» արտահայտությունը, ինչպես նաեւ Ադրբեջանի ժողովուրդը, ունեն հնագույն պատմություն: Ամբողջ աշխարհում այդ արտահայտության վերագրումն Ադրբեջանի կոնկրետ տարածքին հանդիսանում է անժխտելի ճշմարտություն: «Ղարաբաղ» բառը, որով ադրբեջանական ժողովուրդը անվանել է իր հայրենի հողի մի մասը, հիշատակվում է սկզբնական աղբյուրներում 1300 տարի առաջ»:

Խոսք չկա, հենց որ Արցախում հայերը կարդան սույն «պատմագիտական հիմնավորումը», իսկույն «կհավատան, որ 1300 տարի առաջ», ինչպես Հրանտ Մաթեւոսյանը կասեր, «Ջահանդամդարասիից մի ոջլոտ չոբան եկել, տեսել է անմարդաբնակ այս տարածքը, սքանչացել նրա գեղեցկությամբ եւ կնքել «Ղարաբաղ»»:

Իլհամ Ալիեւի նախագահական «հնարամտությունն», այսպիսով, հերթական անգամ ի ցույց է դրվում: Նման մտավարժանքներն արժանի են միայն եւ միայն խղճահարության: Եվ եթե բանը հասցվում է հիմարության, ապա մենք իրավասու ենք նրան դիմել իր իսկ ժողովրդի հայտնի խոսքով. «Աշուղի ասելիքը որ սպառվում է, սկսում է նեյնիմ-նեյնիմ նվագել»:

Սա այդ դեպքն է: Ուրեմն՝ նա ասելիք այլեւս չունի: Իսկ ո՞ւմ է պետք պետության այն ղեկավարը, որի ասելիքն արդեն սպառված է: Բացի հիմարություններից:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Գործարարների կյանքը հեշտացնելու քայլեր եւ խոստումներ

*Կառավարությունը հավաստիացնում է, որ դրանք շարունակական են լինելու*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու» (Doing Business) վարկանշային ցուցանիշով առաջընթաց ունենալու համար Հայաստանը լուրջ փոփոխություններ պետք է ձեռնարկի: 2009-ից Հայաստանի կառավարությունը բիզնես միջավայրի բարելավման ուղղությամբ որոշակի քայլեր սկսեց ձեռնարկել, որոնք ավելի աշխուժացան անցյալ տարի: Սակայն ակնհայտ է, որ մեր երկիրը լուրջ մարտահրավերների առջեւ է կանգնած, հատկապես եթե նկատի ունենանք այս ոլորտում տարածաշրջանային մրցակցությունը եւ մեր հարեւանների իրականացրած քայլերը: Ի՞նչ է արվել Հայաստանում, եւ բիզնես միջավայրի ի՞նչ նոր դրական փոփոխությունների սպասեն գործարարները: Այս հարցերի շուրջը զրուցեցինք էկոնոմիկայի փոխնախարար Կարինե Մինասյանի հետ:**

**Բարեփոխումների իրականացումը, ըստ Կարինե Մինասյանի, նպատակ ունի նվազեցնել բիզնեսի ծախսերը եւ ռիսկերը, հեշտացնել նրա բոլոր քայլերը: «Մրցակցությունը տարածաշրջանում ուժեղ է, եւ փոփոխությունները պետք է արագ կատարենք», նշեց փոխնախարարը՝ նախ թվարկելով այն բարեփոխումները, որ իրականացվել են կառավարության կողմից վերջին 1-2 տարվա ընթացքում, եւ որոնք ընդգրկում են գործարարությամբ զբաղվելու ամբողջ գործընթացը՝ սկսած ընկերության գրանցումից:**

**Բիզնես սկսելը էապես հեշտացել է: Նախատեսվում է բացել մեկ սերվիս կենտրոն, որտեղ կատարվելու է եւ նոր ձեռնարկության գրանցումը, եւ ֆիրմային անվանման գրանցումը, եւ հարկային հաշվեհամարն է տրվելու: Այդ ամենը պետք է կատարվի 3 օրում: Միաժամանակ, ստեղծվելու է ընկերության էլեկտրոնային գրանցման համակարգը, որի ժամանակ բոլոր տվյալները հնարավոր կլինի ուղարկել էլեկտրոնային տարբերակով՝ ինտերնետի միջոցով, եթե դիմողն ունի էլեկտրոնային ստորագրություն:**

*Տես էջ 2*

# Միլլերին ցանկանում են պահել



**Մարտի 22-ին տեղի կունենա ռուսական «Գազպրոմ» պետական ընկերության տնօրենների խորհրդի նիստ, որտեղ պետք է ընտրվի ընկերության նոր նախագահ: Ինչպես «ՌԻԱ Նովոստի» գործակալությանը հայտնել է «իրավիճակին մոտ աղբյուրը», դաշնային իշխանության ներկայացուցիչները պատրաստվում են այդ ընտրություններում քվեարկել «Գազպրոմի» ներկա նախագահ Ալեքսանդր Միլլերի օգտին. «Այո, նման հրահանգ ստորագրվել է», գործակալությանն ասել է աղբյուրը:**

**Միլլերը ղեկավարում է «Գազպրոմը» 2001-ից: Նրա ներկա հնգամյա ժամկետն ավարտվում է 2011-ի մայիսին: Միլլերը Harvard Business Review-ի վարկածով 2009-ին ընդգրկվեց արդյունավետ թոփ-մենեջերների համաշխարհային հնգյակում:**

Հ. Ա.

# Հրանտ Դինքի եւ քահանա Սանտորոյի սպանությունը՝ ոգեւորության աղբյուր Տրապիզոնում

*Սպանություններով հպարտանում է ազգային կրթության քաղաքային վարչությունը*

Մեր հայրենակից Հրանտ Դինքի սպանությունից հետո տասնյակհազարավոր թուրք մարզասերներ տարբեր քաղաքների մարզադաշտերում ինքնամոռաց բացականչում էին. «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք»: Այս բացականչությունները հայ սպանելու պատրաստակամության արտահայտություններն էին՝ համեմված մարդասպանի հանդեպ բարի նախանձով: Ակնհայտ է, որ հայ սպանելու դեպքում մարզասերը հպարտանալու առիթ էր ձեռք բերելու, նրա հպարտությունից իրենց բաժինը անշուշտ ստանալու էին նաեւ մյուսները, իսկ դա Թուրքիայի պարծանքն էր դարձնելու մարզասերների «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք» բացականչող ոհմակին:

Այլ կերպ, երբ խոսքը Թուրքիայում հային է վերաբերում, մարզադաշտը չի տարբերվում կառափնարանից, իսկ մարզասերը՝ ստոր մարդասպանից: Քանի որ վերջինին չեն ներգրավում սպանության մեջ, ուստի նա սպանությամբ հպարտանալու փոխարեն ստիպված է լինում բավարարվել մարդասպանին նախանձելով:

Այն, ինչ չի հաջողվում անել մարդասպան ստահակից չտարբերվող թուրք մարզասերին, արել է Տրապիզոնի նահանգի ազգային կրթության քաղաքային վարչությունը: Մարտի 2-ին Կ. Պոլսո «Հայթերթ» կայքէջի «Հաբերթուրք» թերթից արտատպած հոդվածի համաձայն, Տրապիզոնի ազգային կրթության վարչության պաշտոնական trabzon.meb.gov.tr կայքը քաղաքի ճանաչողության նպատակով նյութ է հրապարակել, որտեղ պատմության եւ մշակույթի մասին տեղեկությունների կողքին հիշատակվում է Հրանտ Դինքի անունը, ընդգծելով հպարտությամբ, թե նրա սպանությունը իրականացրած Օգյուն Սամասթը բնիկ տրապիզոնցի է:

Այդ կայքում ազգային կրթության քաղաքային վարչությունը միաժամանակ հպարտորեն նշել է, որ կաթոլիկ քահանա Անդրեա Սանտորոն սպանվել է Տրապիզոնում, եւ տրապիզոնցիները ցույցի պահին փորձել են Լինչի դատաստանի ենթարկել «Բռնադատվածների եւ կալանավորների ընտանիքների հետ համերաշխության» միության անդամներին:

Տրապիզոնի ազգային կրթության վարչության պաշտոնական կայքում քաղաքի ճանաչողության նպաստելու առաջադրանքով տեղադրված 8 էջանոց այս նյութը նախ շփոթմունք է պատճառել թուրքական կենտրոնական թերթերին, ապա առաջ է բերել բուռն հակազդեցություն: Մամուլի արձագանքից հետո վարչությունը հրապարակումից հանել է հոդվածի այն հատվածը, որը վերաբերում է Հրանտ Դինքի, քահանա Սանտորոյի սպանությանն ու Լինչի դատաստան տեսնելու փորձին:

Դրա առնչությամբ կրթության քաղաքային վարչության պետն ասել է, որ թյուրիմացություն է կատարվել, իսկ Ժողովրդա-հանրապետական կուսակցության քաղաքային վարչության նախագահ Գյուլջան Օզգյուլը, դատապարտելով կատարվածը, ավելացրել է. «Ոչ մի կերպ հավանություն չեմ տալիս: Տրապիզոնը պատմական կարեւորություն ունեցող քաղաք է: Քաղաքի դեմ երկար ժամանակ դավեր են նյութում: Հատկապես փորձում են ցույց տալ, թե ոչ մահմեդականների եւ էթնիկ այլ խմբավորումների դեմ հակակրանքը համատարած բնույթ է կրում Տրապիզոնում: Սա սխալ մոտեցում է եւ բանականությանը հակասող: Մեր կուսակցությունը հետամուտ է լինելու այս գործի բացահայտմանը»:

Ի դեպ, «Բռնադատվածների եւ կալանավորների ընտանիքների հետ համերաշխության» միության անդամներին Լինչի դատաստանի ենթարկելու փորձը Տրապիզոնում կատարվել էր 2003-ի մայիսի 26-ին, 2006-ի փետրվարի 5-ին աղոթելու ժամանակ սպանվել է կաթոլիկ Սանտա Մարիա եկեղեցու քահանա Սանտորոն, իսկ 2007-ի հունվարի 19-ին Օգյուն Սամասթ կոչեցյալ ստահակը «Ակօսի» խմբագրատան առջեւ սպանել էր Հրանտ Դինքին:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Ընթացիկ

## Նախարար Նալբանդյանի հանդիպումները Բրատիսլավայում

### Չեխ դիվանագետ կգործուղվի Երեւան

Մարտի 3-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում մասնակցել է Վիշեգրադյան քառյակի (Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Հունգարիա) հանդիպմանը, որին մասնակցել են նաեւ ԵՄ Արեւելյան գործընկերության ծրագրի անդամ երկրների, ինչպես նաեւ Գերմանիայի արտգործնախարարները, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ արտաքին քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը եւ հարեւանության ու ընդլայնման հարցերով եվրոպական հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն: Հանդիպումը տեղի էր ունենում Վիշեգրադյան քառյակի հիմնադրման քսանամյակի շրջանակներում եւ նվիրված էր արեւելյան գործընկերների եւ Եվրոպական միության համագործակցության հեռանկարներին, ակնկալիքներին եւ հետագա անելիքներին: Նախարար Նալբանդյանը հանդես է եկել ելույթով: Արձագանքելով Ադրբեջանի պատվիրակության ղեկավարի ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ մեկնաբանություններին, նախարար Նալբանդյանը նշել է, որ Արեւելյան գործընկերությունը ղարաբաղյան հիմնախնդրի քննարկումների եւ կարգավորման ձեւաչափը չէ, միջազգային հանրության կողմից ձեւավորված եւ աջակցվող միակ ձեւաչափը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունն է:

Բրատիսլավայում Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է ունեցել իր սլովակ գործընկեր Միկլոշ Ձյուրինդայի հետ՝ քննարկվել է հարցերի լայն շրջանակ: Էդվարդ Նալբանդյանը վերահաստատել է Սլովակիայի նախագահին ուղղված ՀՀ նախագահի Հայաստան այցելելու հրավերը: Նախարարները մտքեր են փոխանակել ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վերաբերյալ: Միկլոշ Ձյուրինդան տեղեկացրել է, որ շուտով Սլովակիան մուտքի արտոնագրեր կտրամադրի Երեւանում Լեհաստանի դեսպանության միջոցով: Այս ենթատեքստում նաեւ քննարկվել է մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման գործընթացը:




Բրատիսլավայում Էդվարդ Նալբանդյանի հաջորդ հանդիպումը Չեխիայի արտգործնախարար Կարել Շվարցենբերգի հետ էր: Չեխիայի ԱԳ նախարարը բարձր է գնահատել անցյալ տարի Պրահայում Հայաստանի դեսպանության հիմնումը նշելով, որ դա լուրջ խթան կհանդիսանա երկկողմ հարաբերությունների զարգացման համար: Նախարար Շվարցենբերգը տեղեկացրել է, որ մինչ Հայաստանում դեսպանության բացումը Չեխիան շուտով դիվանագետ կգործուղի Երեւանում գործող եվրոպական երկրներից մեկի դեսպանություն: Նախարարները համաձայնություն են ձեռք բերել ԱԳՆ-ների միջեւ խորհրդատվությունների ակտիվացման, միջազգային կազմակերպությունների շրջանակներում համագործակցության սերտացման վերաբերյալ, քննարկել են իրավապայմանագրային դաշտի ընդլայնման նպատակով ձեռնարկվելիք քայլերը: Էդվարդ Նալբանդյանն ու Կարել Շվարցենբերգը մտքեր են փոխանակել նաեւ Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունների, ասոցիացման համաձայնագրի բանակցությունների, խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման վերաբերյալ բանակցությունների մեկնարկի նախապատրաստական աշխատանքների, մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացմանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Հ. Ա.



## Հայաստանն ու Հնդկաստանը անվտանգության հարցերով խորհրդակցություններ կանցկացնեն

**Շարունակվում են Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակության հանդիպումները Հնդկաստանում: Հնդկաստանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Շիվ Շանկար Մենոնի եւ Արթուր Բաղդասարյանի առանձնազրույցից հետո կայացել են ընդլայնված բանակցություններ, քննարկվել են անվտանգության ոլորտում հայ-հնդկական համագործակցության հետագա խորացման հնարավորությունները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հնդկաստանի եւ Հայաստանի միջեւ անվտանգության հարցերով պարբերաբար խորհրդակցություններ անցկացնել, ինչը հնարավորություն կտա ավելի մոտեցնել միմյանց դիրքորոշումները անվտանգության մարտահրավերներին դիմակայելու գործում: Կողմերը կարեւորել են երկխոսությունը տարածաշրջանային եւ միջազգային անվտանգության ապահովման գործում: Արթուր Բաղդասարյանը Շիվ Շանկար Մենոնին հրավիրել է Հայաստան, հրավերն ընդունվել է: Քննարկվել է նաեւ Հայաստան կատարվելիք այցի ընթացքում Հայաստանի եւ Հնդկաստանի անվտանգության խորհուրդների միջեւ անվտանգության ոլորտում համագործակցության մասին հուշագիր ստորագրելու հարցը, ինչը նոր լիցք կհաղորդի երկու երկրների փոխհարաբերություններին, կստեղծվի երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տարաբնույթ հարցեր քննարկելու գործուն մեխանիզմ:**

**Հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների պետնախարար Սաչին Պայլոտի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են բարձր տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության խորացման, միջբուհական համատեղ կրթական ծրագրերի իրականացման եւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Երեւանում բացել տեղեկատվական տեխնոլոգիաների հայ-հնդկական կենտրոն: Արթուր Բաղդասարյանը հույս է հայտնել, որ դա կարող է հիմք հանդիսանալ այս ոլորտում հետագա համագործակցության խորացման համար: Կողմերը պայմանավորվել են ջանքեր գործադրել այս տարվա ընթացքում կենտրոնի ստեղծման մեկնարկը տալու համար: Սաչին Պայլոտը պատրաստակամություն է հայտնել ըստ ամենայնի աջակցել այդ գործին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաեւ աշնանը Երեւանում կազմակերպել համաժողով, որին կմասնակցեն երկու երկրների բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագետներ, գիտնականներ, գործարարներ:**

**Արթուր Բաղդասարյանը հանդիպել է նաեւ Հնդկաստանի առեւտրաարդյունաբերական պալատի դաշնության գլխավոր տնօրեն Ռաջիվ Կումարի հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել խորացնել հայ-հնդկական տնտեսական համագործակցությունը, ընթացիկ տարվա սեպտեմբերին կազմակերպել հայ-հնդկական գործարար համաժողով:**

*Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ*

## Գործարարների կյանքը հեշտացնելու քայլեր...

*1-ին էջից*

Եթե նոր ստեղծվող կազմակերպությունը չունի նման ստորագրություն, ապա միայն գրանցման վկայականը ստանալիս պետք է ներկայանա եւ ստորագրի: Բացի դրանից, մշակվել է օրինակելի կանոնադրություն կազմակերպությունների համար, որը կարող է առաջարկվել նոր բիզնես սկսողին: Նախկին քաշքշուկները կանոնադրության գրանցման հետ այլեւս չեն լինի, եւ ցանկացողները կարող են իրենց համար վերցնել օրինակելի կանոնադրության տարբերակը: Ընդհանրապես վերացել է նորաբաց ընկերությունների պարտադիր կանոնադիր կապիտալի պահանջը: Կարինե Մինասյանը հույս հայտնեց, որ առաջիկա 1 ամսվա ընթացքում այս փոփոխություններն ամբողջությամբ կսկսվեն իրագործվել:

Ամենածավալուն փոփոխությունները, էկոնոմիկայի փոխնախարարի հավաստիացմամբ, արվել եւ արվելու են հարկային ոլորտում, որի ցուցանիշը Հայաստանի համար Doing Business-ում ամենավատն է: Այստեղ կրճատվել է հաշվետվությունների քանակը: Ընդհանրապես վերացվել է Ֆ1 եւ Ֆ2 հաշվետվությունների բալանսները ներկայացնելու պահանջը: Սոցվճարների հաշվետվությունները ամսականից դարձել են եռամսյակային: Բոլոր հաշվետվությունների՝ ամսական եւ եռամսյակային, ներկայացման վերջնաժամկետը միասնականացվել է եւ դարձել մինչեւ հաջորդ ամսվա 20-ը:

Ավելացված արժեքի հարկ վճարողների համար էլեկտրոնային հաշվետվությունների համակարգից օգտվելու դեպքում վերացել է հասույթի գրանցման գրքեր պահելու պահանջը: Սա, Կարինե Մինասյանի դիտարկմամբ, նպաստում է նաեւ մրցակցային դաշտի հավասարեցմանը: էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգից արդեն օգտվում են 3 հազար տնտեսվարողներ:

Արտահանողների համար ծագման երկրի սերտիֆիկատի տրամադրման վճարը Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի կողմից նվազեցվել է՝ 37 հազար դրամ գումարած 15 հազար դրամի փոխարեն դարձել 30 հազար դրամ առաջին հայտը ներկայացնելիս, եւ 10 հազար դրամ՝ ապրանքի յուրաքանչյուր հաջորդ խմբաքանակ արտահանելու դեպքում:

Էկոնոմիկայի փոխնախարարը կարեւոր համարեց շինթույլտվության պարզեցման, ժամկետների եւ վճարումների կրճատման փոփոխությունները, որոնք վերաբերելու են բոլոր կառուցապատողներին՝ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց: Սակայն գործընթացի պարզեցումը պայմանավորված է նաեւ շինարարության ռիսկայնությամբ: Եթե կառուցվողը տուն է, ապա ընթացակարգերը պարզ են, իսկ, օրինակ, քիմիական գործարանի համար՝ ավելի բարդ: Մի խոսքով, 137 օրվա փոխարեն գործընթացը կնվազի մինչեւ 27 օրվա, իսկ ավելի քան 900 հազար դրամ վճարները կնվազեն մի քանի անգամ:

Սեփականությունը գրանցելու (կադաստրի համակարգ) մասով մեր երկիրը լավ դիրքերում է: Սակայն այդ դիրքը բարելավելու համար, արդեն իսկ գործող «մեկ պատուհանից» բացի, նախատեսվում է ներդնել գրագրությունը էլեկտրոնային դարձնելու համակարգը, ինչպես սեփականության գրանցման, այլ նաեւ տարբեր տեղեկանքների տրամադրման դեպքում:

Վերոնշյալ փոփոխություններից բացի, որոնց մեծ մասն արդեն կատարված է, իսկ մյուս մասն էլ իրագործման փուլում, առաջիկայում գործարարները այլ բարեփոխումների եւս ականատես կլինեն: Մասնավորապես, հարկային օրենսդրության մեջ հողի հարկի եւ գույքահարկի հաշվետվությունները եռամսյակայինից կդառնան կիսամյակային, հետագայում տարեկան դառնալու նպատակով: Մեկ այլ փոփոխությամբ, հայկական բոլոր այն ընկերությունները, որոնք զբաղվում են վերաարտահանմամբ, կօգտվեն միջազգային պայմանագրերով նախատեսված բոլոր այն արտոնություններից, որոնցից օգտվում են արտահանող կազմակերպությունները: Նախատեսվում է նաեւ առաջիկա 1 տարվա ընթացքում ավելացված արժեքի հարկի դաշտում գործող բոլոր ընկերությունների անցումը հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային տարբերակի: Կնիքի անհրաժեշտության պահանջն էլ վերջնականապես կվերացվի բոլոր այն իրավական ակտերից, որտեղ նման պահանջ դեռ պահպանվում է:

Մաքսային ոլորտում մշտապես վիճելի համարվող «հսկիչ գների» վերաբերյալ կառավարությունը պարտավորեցնելու է պետեկամուտների կոմիտեին հստակ ներկայացնել ներմուծողի բերած հաշիվ-ապրանքագրով մաքսազերծումը մերժելու հիմքերը: Ներկայումս շատ հաճախ մերժումը գրվում է առանց որեւէ պատճառաբանության, ինչը գործարարի համար հասկանալի չի լինում եւ հնարավորություն չի տալիս անգամ բողոքարկելու այդ որոշումը: Նոր մոտեցումը իրավունք է տալիս ներմուծած ապրանքը մաքսազերծել ներմուծողի ներկայացրած հաշիվ-ապրանքագրով, եթե մաքսայինի մերժման հիմքերը հստակ չեն:

Ներկայացնելով գործարար միջավայրի բարելավմանն ուղղված այս միջոցառումները, էկոնոմիկայի փոխնախարարը միաժամանակ հայտնեց, որ այդ գործընթացը անընդհատ է լինելու, եւ ներկայումս քննարկվում են գործընթացների հետագա պարզեցման նոր մոտեցումներ, որոնք, սակայն, հանրությանը կներկայացվեն 2-3 ամսվա ընթացքում:

## ԱՄՆ-ը եւս մեկ անգամ կրկնում է՝ հատուկ Ադրբեջանի ու Թուրքիայի համար

*1-ին էջից*

**Սրան Գորդոնն ավելացրել է, որ խնդիրը Մինսկի խումբը չէ: Եթե որեւէ այլ արդյունավետ ձեւաչափ լիներ, ապա, ըստ Գորդոնի, դա կքննարկվեր, բայց ԱՄՆ-ը կարծում է, որ Մինսկի խումբը շատ լավ է աշխատում: «Նա մեծ աշխատանք է տանում, որպեսզի հաղթահարվեն առկա անհանգստությունները եւ տարաձայնությունները», նշել է Գորդոնը:**

**Ղարաբաղյան հարցում Ռուսաստան-ԱՄՆ համագործակցության առնչությամբ Գորդոնն արձագանքել է, որ երկու երկրներն էլ հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների աջակիցներ են եւ ակտիվորեն համագործակցում են այդ հարցում:**

**Իսկ ադրբեջանական այն մեկնաբանությունների առնչությամբ, թե Ռուսաստանը, կազմակերպելով Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների եւ նախարարների հանդիպումները, կամաց-կամաց իր հսկողության տակ է վերցնում ողջ գործընթացը, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնականը Ռուսաստանի գործելակերպը թափանցիկ է համարել, հավելմամբ, որ Մինսկի խմբի համանախագահող մյուս երկրները լիովին տեղյակ են պահվում հանդիպումների մանրամասներին: Ավելին, Գորդոնը վկայել է, որ «Մինսկի խմբի համանախագահներն այս հարցում փոխադարձ վստահություն ունեն»:**

**Գորդոնը նաեւ անդրադարձել է Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի աշխարհագրական մոտիկությանը, նշելով, որ դա եւս նպաստում է հանդիպումները Ռուսաստանի նախաձեռնությամբ անցկացնելուն ոչ թե ավելի հեռու գտնվող Վաշինգտոնում, այլ Մոսկվայում, Պետերբուրգում կամ Սոչիում:**

**Հայ-թուրքական հարաբերությունների գործընթացի առնչությամբ հարցին ի պատասխան Ֆիլիպ Գորդոնն ընդունել է, որ այդ գործընթացը ներկայումս դադարի վիճակում է, բայց ԱՄՆ-ը հավատում է, որ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացումը մեծ կարեւորություն ունի ոչ միայն Հայաստանի եւ Թուրքիայի, այլեւ ողջ տարածաշրջանի համար՝ նպաստելով նաեւ Հարավային Կովկասում անվտանգության եւ կայունության ամրապնդմանը:**

**Հիշեցնելով, որ Միացյալ Նահանգները միշտ աջակցել է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին, Գորդոնն ընդգծել է, որ ԱՄՆ-ը համաձայն չէ Անկարայի այն մոտեցմանը, թե հայ-թուրքական արձանագրությունները կարող են վավերացվել ղարաբաղյան բանակցություններում առաջընթաց լինելու դեպքում: Եվ սա, ըստ Գորդոնի, բնավ էլ նորություն չէ, այլ ԱՄՆ դիրքորոշումն է հայ-թուրքական գործընթացի հենց սկզբից առ այն, որ «Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացումը չպետք է կապել որեւէ այլ խնդրի»:**

**ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնական Գորդոնն անպատասխան է թողել հարցը, թե ինչպես կարող են ազդել հյուսիսաֆրիկյան բռնատիրական երկրներում սկիզբ առած ժողովրդական շարժումները Ադրբեջանի վրա:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

# Փողոցային առեւտրի քաղաքական երեսը

***Երեկ Ազգային ժողովի ճեպազրույցներին չէին ներկայացել «Ժառանգությունն» ու ԲՀԿ-ն, առաջինը պարզապես առայժմ բոյկոտում է ԱԺ աշխատանքը, երկրորդը՝ անհասկանալի պատճառով: Ճեպազրույցներից առանձնացնենք մի քանի թեմա:***

### Փողոցային առեւտուր

Փողոցային առեւտրի խնդիրը ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը** պատկերացնում էր այսպես. սանիտարական վիճակն ապահովելով՝ առանձին մարդաշատ վայրերում, շենքերի տարածքներում հաց վաստակելու հնարավորություն ստեղծել՝ «բայց այնպես չէ, որ որտեղ ուզենան առեւտուր կազմակերպեն»: Իսկ ՕԵԿ-ից **Հովհաննես Մարգարյանը**, որը ԱԺ տարածքային եւ տեղական ինքնակառավարման հանձնաժողովի նախագահն է՝ խոստացավ խորհրդարանական լսումներ այս հարցով: ՀՅԴ խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանն** ասաց, որ սպասում են երկրից բացակայող քաղաքապետի վերադարձին՝ այդ եւ քաղաքի հետ կապված մի շարք խնդիրներ նրա հետ քննարկելու:

### Սոչիի հանդիպում

ՀՅԴ խմբակցության ղեկավարը այսօր կայանալիք Սոչիի հանդիպումից որեւէ լուրջ բան չի սպասում. «Փոփոխություններ կլինեն այն ժամանակ, երբ հայկական կողմը կոշտ ու կտրուկ ասի՝ այլեւս առանց Ղարաբաղի մենք ձեզ հետ խոսելու բան չունենք, այ այդ ժամանակ կտրուկ փոփոխություններ կսկսվեն»: Թե չէ՝ ղարաբաղյան խնդրի շուտափույթ լուծման հնարավորություն չի տեսնում, հակառակը՝ Ղարաբաղի չներգրավվածությունն ավելի է խոչընդոտում հարցի լուծմանը:

### «Ժառանգության» հետ պատահածի մասին

Հեռուստատեսությամբ ոստիկանության պարեկներից մեկի ելույթին անդրադառնալով՝ Վ. Հովհաննիսյանը նկատեց. «Որքան հասկանում եմ՝ ոստիկանությունն արդեն սկսում է հասարակությանը դասեր տալ՝ ի՞նչ կարելի է անել կառավարությանը, ինչը կարելի է պահանջել, ինչը՝ ոչ», ասաց նա, նկատելով, թե ոստիկաններն սկսում են քաղաքական գնահատականներ տալ գործընթացներին, ինչը հավանաբար սահմանադրությանն ու օրենսդրությանը ծանոթ չլինելու հետեւանք է. «Օրինակ՝ մեզ խորհուրդ են տալիս, թե շտապել ենք մեր հայտարարությունն անելով: Բայց դու ո՞վ ես ախր»: Գ. Սահակյանն էլ կարեւորեց այսպիսի միջադեպերի չկրկնվելն ապագայում՝ նշելով, որ պատգամավորները տարակուսել են տեղի ունեցածով, քանի որ անկախ ամեն ինչից՝ պատգամավորների հանդեպ ոստիկանները պատշաճ վերաբերմունք պետք է դրսեւորեին, վերջիններս էլ պետք է ժողովրդի ցասումն ու ընդվզումը հնարավորինս մեղմելու համար պահանջները ներկայացնեին իշխանությանը՝ դա կարող են անել եւ խորհրդարանում, եւ թույլտվություն ունեն կառավարության նիստերին մասնակցել: Ըստ նրա՝ կատարվածով մտահոգ է նաեւ Ազգային ժողովի նախագահը, այնպես որ ոստիկանությանը հանձնարարական է տրված միջադեպի առիթով ծառայողական քննություն անցկացնել: «Ժառանգության» բոյկոտը ԱԺ աշխատանքներին չի բխում ոչ կուսակցության, ոչ պետության շահերից. «Ժառանգությունը» փոքր -ինչ ձանձրացրել է, բայց մենք ի վիճակի ենք լսել կառուցողական քննադատություն», ասաց Գ. Սահակյանը: Հ. Մարգարյանն առաջարկեց սպասել ծառայողական քննության ավարտին:

### Տեր-Պետրոսյանի «վերջնագրի շուրջը»

Հ. Մարգարյանն առաջարկեց տարանջատել՝ եթե վերջնագիր կամ պահանջ է՝ անընդունելի է, եթե առաջարկներ են՝ որեւէ ողջախոհ առաջարկություն պետք է քննարկման առարկա դառնա: Սակայն այս, կոալիցիոն մոտեցումը, Վ. Հովհաննիսյանին անտրամաբանական թվաց՝ որ վերեւում գրված լինի առաջարկ եւ ոչ թե պահանջ: Բայց նաեւ ասաց՝ ՀԱԿ պահանջագիրը չի կարդացել:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Հ. Գ.1- Գալուստ Սահակյանից լրագրողները հետաքրքրվեցին, թե հնարավոր համարո՞ւմ է վարչապետի փոփոխությունը. «Նախ, չեմ կարծում, որ փոխել բառը ճիշտ է ասված այստեղ: Հանձին վարչապետի՝ մենք պատասխանատու ենք այն իրավիճակի համար, որը մենք ինքներս էլ ներկայացնում ենք հասարակությանը: Այսինքն՝ մտածել, որ որեւիցե փոփոխությամբ սոցիալական խնդիրներն ամբողջովին պետք է լուծել, մենք այդ տեսակետին չենք: Իսկ ընդհանուր առմամբ՝ որեւէ մեկն իր դիրքերում հավերժ չէ, բայց իր մտքերով ու սկզբունքներով միշտ հավերժ է»:**

**Հ. Գ. 2- Ի դեպ, երեկ լրագրողների հետ հանդիպած ԱԺ ՀՀԿ-ական պատգամավոր Գագիկ Մինասյանը ՀԱԿ-ի ներկայացրած 15 կետից բաղկացած վերջնագիրն անվանեց գունավոր հեղափոխությունների կենտրոններից մեկում կազմված, քանի որ այնտեղ ներկայացվող գումարները դոլարային տեսք ունեն: Կամ մշակվել է գունավոր հեղափոխությունների կենտրոններում եւ ուղարկվել Հայաստան, կամ ուղղված են հենց այդ կենտրոններին: Կամ-կամ:**

# «Ժառանգությունն» ասուլիսում էր ԱԺ-ից դուրս



**Հանդիպելով լրագրողների հետ երեկ «Ժառանգության» պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը, անդրադառնալով կառավարության շենքի մոտ նախորդ օրը տեղի ունեցածին, նշեց, թե ակցիան բացառապես խաղաղ է եղել, իր կողմից օրենքի խախտման որեւէ դրվագ չի եղել. «Ցավում եմ ոստիկանների համար, քանի որ իշխանության, կառավարության քայլերը ժողովրդի զայրույթն են առաջացնում, նրանք հետ են քաշվում եւ դեմ տալիս ոստիկաններին»: Նա ասել է, որ դիմելու են դատարան, եւ առնվազն մեկ ոստիկան՝ փոխգնդապետ Ավետիսյանը, պետք է հրաժարական տա: Նրա կուսակից Լարիսա Ալավերդյանն էլ ասել է, թե ոստիկանները պետք է իմանան, որ այլեւս սովետական կարգեր չեն, եւ իրենք ուրիշ խնդիրներ ունեն օրենքով: Իսկ «Ժառանգության» վարչության քարտուղար Կարինե Հակոբյանը խնդիրը տեսել է ոստիկաններին հրաման տված մարդկանց շրջանակում:**

# Նախագահը խորհրդակցություն էր հրավիրել Սեւանում

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ Սեւանա լճի հիմնահարցերի վերաբերյալ հրավիրել է խորհրդակցություն, որին մասնակցել են երկրի ղեկավարի կարգադրությամբ ստեղծված Սեւանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի անդամներն ու համապատասխան գերատեսչությունների ղեկավարներ: ՀՀ նախագահին առընթեր Սեւանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի նախագահ **Վլադիմիր Մովսիսյանը** ներկայացրել է հանձնաժողովի գործառույթների եւ հանրապետության ղեկավարի հանձնարարականների շրջանակում 2010-ին իրականացված աշխատանքներն ու 2011-ի ծրագրերը: 2010թ. նախանշված միջոցառումները, Վլադիմիր Մովսիսյանի հավաստմամբ, իրականացվել են լիարժեքորեն եւ սահմանված ժամկետներում: Հանձնաժողովի նախագահն անդրադարձել է նաեւ լճի հետ կապված մի շարք հիմնախնդիրների, որոնք այսօր էլ արդիական են:

Ափամերձ տարածքների մաքրման աշխատանքների մասին զեկուցել է ՀՀ բնապահպանության նախարար **Արամ Հարությունյանը**: Նախագահը նշել է, որ թեպետ հանձնաժողովն իր գործունեության գրեթե երկու տարիների ընթացքում զգալի աշխատանք է իրականացրել՝ եղել են հանձնաժողովի բազմաթիվ նիստեր, կարեւորագույն մի շարք հարցերի շուրջը մասնագիտական քննարկումներ, այդ հարցերի հիմնական մասն առաջարկությունների տեսքով ներկայացվել կառավարություն, եւ դրանց հիման վրա ընդունվել են որոշումներ, այդուհանդերձ, խնդիրների լուծման տեմպերը դեռեւս բավարար չեն: Երկրի ղեկավարն ընդգծել է, որ կատարված աշխատանքը եւ որոշակի առաջընթացը, մասնագետներից բացի, պետք է տեսանելի լինեն նաեւ Սեւան այցելողի համար: Խորհրդակցության ավարտին Սերժ Սարգսյանը մի շարք հանձնարարականներ է տվել Սեւանա լճի հիմնահարցերի հանձնաժողովին եւ նրա նախագահին, փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարին, բնապահպանության, տրանսպորտի եւ կապի նախարարներին, Գեղարքունիքի մարզպետին եւ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի նախագահին:

Հ. Ա.



# Փողոցային «էսքիզներ»

**Փողոցային առեւտուրը հերթական ճգնաժամն է ապրում. Երեւանի ամեն նոր քաղաքապետ իր առաջին գործը նախեւառաջ քաղաքը մաքրելն է համարում: Ինչպես պարզվեց ամենահեշտը փողոցային առեւտրի արգելումն է: Աղբահանության հարցը կարծես տեղից շարժվել էր. նախ՝ նոր աղբամաններ տեղադրվեցին, աղբակույտերը վատագույն դեպքում 2-3 օր են մնում, որոշ տեղերում նույնիսկ ամեն օր եւ օրական մի քանի անգամ են տարվում: Բայց որ անկեղծ լինենք, մենք էլ մի բանի պետք չենք, շատ ենք փնթի ու ծույլ: Հակոբ Հակոբյան փողոցի մի հատվածի ետնամասի քիչ խորք ընկած միջշենքային մի տարածք, օրինակ, դիմացի շենքի բնակիչներն իրենց համար աղբավայր ընտրեցին: Կուտակում ու կուտակում էին: Թաղապետարանը մի օր որոշեց ու աղբամաններ տեղադրեց: Լավ էր, աղբը սկսվեց կուտակվել դրանց մեջ: Մի օր էլ այդ մետաղե ժանգոտ տարաները փոխարինվեցին նորերով, բայց 20-30 մետր վերեւ դրեցին: Եվ ինչ եղա՞վ: Այս նույն մարդիկ ծուլանում են մի քանի մետր ավել քայլել, աղբը շպրտում են գետնին ու հանգիստ տուն դառնում՝ ստեղծելով գարշելի ու անճոռնի տեսարան ու հակասանիտարական վիճակ: Մի քանի օր առաջ Կասյան փողոցի մի քանի բնակիչներ որոշել էին ծառի բունը աղբաման սարքել. շուրջբոլորը աղբի գույնզգույն տոպրակներ էին շարել: Տեսարժան էր շա՜տ: Մեր քաղաքը մի քիչ քաղաքի կնմանվի, երբ այս չարաբաստիկ աղբահանությունը կանոնավոր լուծում գտնի, եւ մենք էլ մեր կենցաղային մակարդակը մի փոքր բարձրացնենք: Մեկ էլ, հավատս չի գալիս, բայց երբ ձմեռները փողոցի ձնակույտերն ու սառցաշերտերը մաքրվեն: Գոնե այսքանով:**



*Գրքերի էկզոտիկ կրպակ...*

**Բացօթյա առեւտուրը վաղուց քաղաքային կյանքի անբաժանելի մասն է, որ երբեմն այնպես է ծավալվում, որ փողոցի մեծ մասը զբաղեցնում է: Հակոբյան փողոցի մայթերից մեկը տարիներ շարունակ այդպիսին էր, մինչեւ բացօթյա առեւտրի արգելումը: Մեր տիպի երկրներում, իհարկե, երեւույթի սոցիալական կողմն ամենակարեւորն է, երբ բնակչության մի մասի համար այս առեւտուրը օրահացը վաստակելու միակ միջոցն է: Քաղաքապետարանի որոշումը այս մարդկանց գործազուրկ դարձնելով, սոցիալական բողոքի նոր ալիք է բարձրացնում: Կոմունալ ծառայությունների թանկացումներից դեռ ուշքի չեկած, բնակչության գլխին այս անգամ թափվում է առաջնահերթ սպառման մթերքների գների աճը: Որքանո՞վ կապ ունի փողոցային առեւտրի արգելումը գների աճի հետ, չգիտեմ:**

**Որ մանր առեւտրով զբաղված բնակչության այս խավը խուճապ է ապրում, ակնհայտ է: Կրպակ ունեցողները դրսի սեղանիկներից ապրանքը ներս քաշեցին, իրենք էլ ներս մտան, ովքեր չունեին, դժվար օրեր են ապրում: Բայց հետաքրքրականը՝ մարդաշատ այդ փողոցը, ուր աշխույժ առեւտուր էր գնում օրվա տարբեր ժամերի, հիմա ամայացել է. կրպակներում գնորդ չկա՝ հատ ու կենտ: Թանկացումնե՞րն են պատճառը: Թերեւս: Իսկ խիղճը կորցրած վաճառականները պահը բաց չեն թողնում: Օր օրի գները թանկացնում են, ըստ որում ներկրված ապրանքը անհամեմատ ավելի մատչելի է, իսկ տեղականը՝ սուղ, օրինակ գազարի կամ սոխի գները ամեն օր 50 դրամով ավելանում են: Որ հարցնում ես պատճառը, ասում են՝ (կիսահեգնական) «ռաստամոժկան թանկացել է»: Իրենք իրենցից ու սարքովի գներից գոհ, խոժոռ ու լարված սպասում են քաղաքապետարանի նոր որոշմանը: Բայց ցանկալի լուրն այդպես էլ չի գալիս: «Հենց նոր լսեցի հեռուստատեսությամբ, որ երկուշաբթի օրվանից դրսի սեղանիկները թույլատրելու են», ձայնում է մեկը: «Մաղարիչ եմ անելու Արմեն, վաղը կոնյակ կբերեմ, որ ասածդ ճիշտ դուրս գա», կանչում է դիմացից 2-3 կապ կանաչի ու չորացրած ավելուկ վաճառող կինը՝ սառած ձեռքերը շփելով: Վաղը նա կոնյակ, իհարկե, չբերեց: Ու փողոցը դարձյալ մնաց անաղմուկ անտարբերության մեջ, անուրախ, անառեւտուր: Առեւտուր, որ ձգվում էր մինչեւ «Բարեկամություն» մետրոյի գետնանցի աստիճանավանդակներ, որոնց վրա հերթականությամբ նորից կրպակներ են բուսած՝ միաձեւ ու միաչափ: Ամեն տեղ նույն բաներն են վաճառում, սնունդ, հագուստ, կենցաղային պահանջմունքների տարբեր իրեր: Աչքդ սովոր է եւ ուրիշ բան չի էլ փնտրում: Բայց արի ու տես, երբեմն անակնկալներ էլ են լինում: Կրպակներից մեկում, ո՞վ զարմանք, գրքեր են հայտնվել՝ կանոնավոր շարված՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն գրքեր, բառարաններ, դասագրքեր, նույնիսկ գեղավեստական գրականություն կա: Ափաչափ տարածք է, բայց գրքերը կանոնավոր, կողք կողքի տեղ են զբաղեցրել. Կրպակի գլխին անգամ՝ ցուցանակ կա: «Տեսնես ի՞նչ է մտածել այս մարդը. այս սնանկացող ու թալանված ժողովուրդը գրքի այս կրպակին հայացք կնետի՞ արդյոք»: Էկզոտիկ է, չէ՞: Լավ է, իհարկե, բայց վատը այս ամենի մեջ իմ զարմանքն է:**



*Մի փոքր՝ 10-15 մ հեռավորությամբ աղբատարներ են տեղադրված...*

Մ. Բ.

# Մտահոգություն ասորիների ցեղասպանության զոհերի հուշարձանի նախագծի առթիվ

Ասորի հասարակայնությունը ոգեւորվել էր, երբ 2009-ին տեղեկություն էր հրապարակվել, որ ««Աթուր» ասորական միությունը» (ղեկավար՝ Արսեն Միխայլով) ոչ կառավարական կազմակերպության նախաձեռնությամբ Երեւանի քաղաքապետարանը հողակտոր է հատկացրել ասորի ժողովրդի 1915 թ. ցեղասպանության զոհերի հուշարձանի կառուցման համար:

Բայց, ցավոք, «Աթուր» միության ղեկավարության հետագա քայլերը տարակուսանք առաջացրին: Երեւանի քաղաքապետարանին ներկայացվեց եւ ավելի ուշ քաղաքապետարանում հաստատվեց հուշարձանի նախագիծ (էսքիզ), որը ոչ միայն մրցութային ընտրության չէր ենթարկվել, այլեւ չէր հրապարակվել հանրային դիտման համար: Ուստի 2010-ի հունիսին էսքիզի հրապարակման հարցը ինտերնետ-կոնֆերանսի միջոցով դարձավ Ասորիների միջազգային համակարգիչ խորհրդի (ԱՄՀԽ) քննարկման առարկա: ԱՄՀԽ անդամների համառ պահանջով տվյալ նախագիծը հրապարակվեց:

Հայաստանի, մերձավոր եւ հեռավոր արտասահմանի ասորիները կտրուկ քննադատության ենթարկեցին նախագիծը: ԱՄՀԽ անդամները եւ առանձին մասնագետներ սկսեցին Երեւանի քաղաքապետարանը հեղեղել իրենց զայրալից նամակներով: Բերենք տվյալ էսքիզի վերաբերյալ նրանց միայն որոշ գնահատականներ եւ խոսքեր.

- «Դրանում արտացոլված չեն հիմնական գաղափարները՝ ցեղասպանության ողբերգությունը եւ ավանդական ասորական քանդակագործությանը ներհատուկ բնորոշ գծերը, որոնք ցույց կտային համալիրի պատկանելությունն ասորական մշակույթին» (Երեւանի քաղաքապետին Ուկրաինայի նկարիչների միության Նիկոլաեւի ազգային կազմակերպության անդամներ Ե. Ի. Միրզոեւի եւ Ռ. Ե. Միրզոեւի ուղարկած նամակից):

- «Հուշարձանի հաստատված էսքիզը գեղարվեստական եւ իմաստային առումներով շատ թույլ է եւ ոչ պրոֆեսիոնալ: Ես որպես արեւելագետ եւ լրագրող չեմ հասկանում, թե ինչու այս նախագիծը չդրվեց բաց քննարկման եւ չդարձավ մրցութային, ինչպես դա տեղի է ունենում ամբողջ աշխարհում նման մասշտաբի ու նշանակալիության նախագծերի հետ» (Երեւանի քաղաքապետին www.atranews.com կայքի (Չիկագո, ԱՄՆ) գլխ. խմբագիր Վ. Շումանովի գրած նամակից):

- «Մենք վստահ ենք, որ Դուք անկարող եք չկիսել մեր լուրջ մտահոգությունն այն փաստի առթիվ, որ Երեւանի գլխավոր ճարտարապետը հաստատել է ասորիների ցեղասպանության զոհերի հուշարձանի խիստ անհաջող նախագիծ, որը միանգամայն անարտահայտիչ է, չի արտացոլում մեր վշտի խորությունը եւ իրադարձությունների ողբերգականությունը: Տվյալ նախագծին համապատասխան հուշարձան կառուցելը... կլիներ մեր էթնիկական զգացումների անարգում: Բացի դրանից, հուշարձանի այդ նախագիծը խախտում է Երեւանում գեղարվեստական բարձր արժանիքներով աչքի ընկնող եւ քաղաքին անկրկնելի տեսք տվող հուշարձանների կառուցման ավանդույթները, ինչը հազիվ թե անտարբեր թողնի հարազատ քաղաքը սիրող երեւանցուն: Մենք բնավ չէինք ուզենա, որ երեւանցիները անհաջող ճարտարապետական լուծումը զուգորդեին ասորիների հետ:

... Ասորիներն ըստ արժանվույն գնահատում են Հայաստանի արդի մայրաքաղաքի հոգեւոր ու մտավոր մթնոլորտի ներգործությունը նրա բոլոր ազգությունների բնակիչների վրա:

Անշուշտ, մենք իրավունք չունենք Ձեզ պարտադրելու մեր կարծիքը, բայց նաեւ չենք կարող անտարբեր մնալ տվյալ իրավիճակում: Շատ երկրների ասորիներ քանիցս ցանկություն են հայտնել միջոցներ փոխանցելու հուշարձանի շինարարությանը: Նման համատեղ գործունեությունը հարկավոր է ոչ միայն հուշարձանի բուն շինարարության, այլեւ աշխարհով մեկ սփռված ժողովրդի համախմբվածության պահպանման համար: Ցավոք, հուշարձանի հաստատված նախագիծը տեսնելով՝ արտերկրի ասորիները ստիպված հրաժարվում են դրա մասնային ֆինանսավորման ծրագրերից:

Տվյալ իրավիճակից միակ ելքը կլիներ նախագծի հաստատման լայնընդգրկուն հանձնաժողովի ստեղծումն ազնիվ եւ բաց մրցույթի հիման վրա: Հանձնաժողովը պետք է բաղկացած լինի Հայաստանի ասորիների մեջ հեղինակություն վայելող մարդկանցից, ինչպես նաեւ մասնագետներից՝ նկարիչներից, քանդակագործներից, ճարտարապետներից: Իհարկե, նման հանձնաժողովում վճռական ձայնի իրավունք պետք է ունենան Հայաստանի քաղաքացիները, նախ եւ առաջ՝ հենց Երեւանի բնակիչները: Հուշարձանի կառուցմանն ուղղված միջոցների հանգանակությունը պետք է լինի ազնիվ եւ բացահայտ:

Մենք խորին գոհունակությամբ տեղեկացանք, որ Հայաստանում արդեն կազմակերպվել է նախաձեռնող խումբ, որը հանդես է գալիս վերոհիշյալ սկզբունքների հիման վրա հարցի լուծման օգտին:

Թախանձագին խնդրում ենք պաշտպանել մրցույթի հիման վրա հուշարձանի նախագիծը հաստատելու նախաձեռնությունը, ինչը երախտագիտությամբ կընկալվի տարբեր երկրների ասորիների կողմից եւ թույլ կտա ընդունել ձեր գեղեցիկ քաղաքի դիմագծի համար լավագույն ճարտարապետական լուծումներ» (Երեւանի քաղաքապետին Մոսկվայի ասորիների տարածաշրջանային ազգամշակութային ինքնավարության նախագահ, պատմական գիտությունների թեկնածու Ի. Յու. Զայայի ուղարկած նամակից):

ԱՄՀԽ-ն տվյալ էսքիզի իրականության անթույլատրելիության վերաբերյալ կարծիք էր արտահայտել եւ «Աթուր» միության ղեկավարությունն առաջարկել էր քաղաքապետարանին դիմել խնդրանքով՝ չեղյալ հայտարարելու տվյալ էսքիզի հաստատման որոշումը եւ նախագծերի բաց մրցույթ հայտարարելու 1915-ի ասորիների ցեղասպանության զոհերի հուշարձան կանգնեցնելու համար:

Ցավոք, «Աթուր» միության ղեկավարությունը անուշադրության էր մատնել միջազգային ասորական հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչների կարծիքը: Այդ պատճառով 2010 թ. նոյեմբերի 6-ին ստեղծվեց «Ասորի ժողովրդի 1915 թ. ցեղասպանության անմեղ զոհերի հուշարձան կանգնեցնելու» հարցով զբաղվող հանձնաժողով (այսուհետեւ՝ Հանձնաժողով), քանի որ «ասորիների ցեղասպանության զոհերի՝ Հայաստանում կանգնեցված հուշարձանը կարող է ունենալ անհամեմատ ավելի մեծ նշանակալիություն, քան աշխարհի որեւէ այլ երկրում կանգնեցված նույնպիսի հուշարձանը» (Երեւանի քաղաքապետին Ուկրաինայի ասորիների միության փոխնախագահ Գ. Բ. Բադարիի ուղարկած նամակից):

Հանձնաժողովի աշխատանքին մասնակցելու են հրավիրվել Հայաստանի Հանրապետության ասորիների հասարակական եւ կրոնական կազմակերպությունների, ՀՀ ասորական միավորումների ներկայացուցիչներ, ասորիների համախմբված բնակության վայրերի, արտերկրի ասորական սփյուռքի հասարակական եւ կրոնական կազմակերպությունների վստահավոր ասորի գործիչներ:

Նաեւ մշակվել է Հանձնաժողովի կանոնադրություն, որտեղ մասնավորապես նշված է.

«1. Ֆինանսական հաշվետվություն եւ պարզաբանումներ պահանջել

- հուշարձանի կառուցման նպատակով հավաքված միջոցների հանգանակման ու ծախսման վերաբերյալ,

- համապատասխան մարմիններին դիմել հուշարձանի տեղադրման նախագծի կետերի խախտումների, միջոցների ոչ նպատակային ծախսման եւ թաքուցման դեպքերում:

2. Հանձնաժողովը պարտավոր է հաշվետվություններ հրապարակել հուշարձանի տեղադրմանն ուղղված միջոցների հանգանակության վերաբերյալ»:

Երեւանում կանգնեցվելիք հուշարձանի մասին աշխարհի ասորի հասարակայնությանն առավել ճշգրիտ տեղեկացնելու եւ նրա հնարավորինս լայն մասնակցությունն ապահովելու նպատակով Հանձնաժողովը կազմվել է.

- վճռական ձայնի իրավունք ունեցող Հանձնաժողովից, որը բաղկացած է Հայաստանի ասորի ազգության քաղաքացիներից,

- խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող Միջազգային հանձնաժողովից, որը բաղկացած է արտերկրի ասորական սփյուռքից, այսինքն՝ ոչ Հայաստանի քաղաքացիներից:

Հանձնաժողովի հերթական նիստում որոշում ընդունվեց Երեւանի քաղաքապետին դիմել հուշարձանի նախագծի հաստատման որոշումը չեղյալ հայտարարելու խնդրանքով, որպեսզի հայտարարվի ասորի ժողովրդի 1915 թ. ցեղասպանության անմեղ զոհերի հուշարձանի լավագույն նախագծի մրցույթ, հաշվի առնելով, որ քաղաքապետարանի հաստատած նախագծով հուշարձանի կառուցումն անթույլատրելի է, քանզի.

1. նման հուշարձանի կառուցումը վերաբերում է ոչ միայն Հայաստանի ասորիներին, աշխարհի ասորի հասարակայնությանը, այլեւ անմիջականորեն Երեւանի քաղաքացիներին, ուստի այդօրինակ հուշարձանը չի ներգծվի Հայաստանի մայրաքաղաքի ճարտարապետության մեջ եւ կփչացնի նրա տեսքը, եւ երեւանցիներն անհաջող ճարտարապետական կառույցը կզուգորդեն ասորի ժողովրդի հետ, ինչը պարզապես անթույլատրելի է:

2. Գեղարվեստական տեսակետից թույլ եւ ոչ պրոֆեսիոնալ հուշարձանի կանգնեցումը կվիրավորեր մեր էթնիկական զգացումները:

3. Նման կառույցի տեղադրումը մենք կարող ենք համարել ասորի ժողովրդի մշակութային եւ հոգեւոր ժառանգությունը նսեմացնող կանխամտածված քարոզչություն:

**ԻՐԻՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ**
**Հայաստանի ասորական կազմակերպությունների «Խայադտա» ֆեդերացիայի նախագահ**

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ռուբեն Վարդանյան. «Հայաստանի նախագահ պետք է լինի այն անձը, ով երկար տարիներ ապրել ու աշխատել է Հայաստանում»

*Ռուսաստանյան «Գազետա. ռու» ինտերնետային հանրաճանաչ հրատարակությունը (անցյալ տարի նրա հյուրն էր նախագահ Դ. Մեդվեդեւը) օրերս ընդարձակ հարցազրույց էր հրապարակել «Տրոյկա դիալոգ» ընկերությունների խմբի տնօրենների խորհրդի նախագահ Ռուբեն Վարդանյանի հետ: Վարդանյանը Ռուսաստանի հայության ներկայիս ամենաերեւելի ներկայացուցիչներից է, որը պատկառելի հաջողությունների է հասել որպես մասշտաբային բիզնեսմեն, ֆինանսիստ, ինտելեկտուալ:*

*Մի կողմ դնելով համաշխարհային եւ ռուսաստանյան էկոնոմիկաների զարգացման վերաբերյալ բարձրակարգ մեկնաբանությունները, ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում անձնական բնույթի մի քանի հարց ու պատասխան առանց մեկնաբանությունների:*

**- Ո՞րն է Ձեր կյանքի նշանաբանը:**

- Ամեն ինչ մեր ձեռքում է:

**- ՌԴ նախագահ Մեդվեդեւի հետ Ձեր հարաբերությունները բարեկամակա՞ն են:**

- Ես բարեկամական հարաբերություններ չունեմ նախագահի հետ: Թեեւ ինձ համար հաճելի է, որ նա, դառնալով ՌԴ ղեկավար, որոշեց մնալ մեր բիզնես-դպրոցի հոգաբարձական խորհրդի նախագահ:

**- Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է, որ Ձեր թեկնածությունն առաջադրվի Հայաստանի նախագահի պաշտոնի համար, եւ առհասարակ՝ ի՞նչ մոտեցում ունեք ՀՀ նախագահ ընտրվելու հարցում:**

- Դա հնարավոր չէ: Նախ՝ ես Ռուսաստանի քաղաքացի եմ եւ երբեք չեմ եղել Հայաստանի քաղաքացի, ես հայկական անձնագիր չունեմ: Երկրորդ՝ որ շատ ավելի կարեւոր է, ես խորապես համոզված եմ, որ Հայաստանի նախագահ պետք է լինի այն անձը, որ երկար տարիներ ապրել ու աշխատել է Հայաստանում եւ խորությամբ ու լավ գիտի, թե այնտեղ ինչ է տեղի ունենում: Երրորդ՝ ես գտնում եմ, որ չունեմ այնպիսի հատկություններ, որոնք ինձ լավ պետչինովնիկ կդարձնեին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում:

**- Հայաստանում ռուսալեզու դպրոցների մասին օրենքի առաջադրումը բիզնե՞ս է, հոբբի՞, կրեմլյան պատվե՞ր, թե՞ լոյալության ապացույց:**

- Դժվար է պատասխանել անտակտ տրված հարցին (ի դեպ, հարցադրողը, իհարկե, հայ էր-Ռ. Հ.): Կուզենայի նշել, որ այն նախագիծը, որը մենք պատրաստվում էինք իրագործել Հայաստանում, ոչ մի ձեւով կապված չէ Հայաստանում ռուսալեզու դպրոցների մասին օրենքի հետ, քանի որ մեր դպրոցում դասավանդումը ծրագրված էր անգլերենով եւ ոչ թե ռուսերենով: Ավելին, ես գտնում եմ, որ Հայաստանում շատ կարեւոր է հայերենի իմացությունը, եւ դրա համար իրոք պահանջվում են հսկայական ներդրումներ, որպեսզի որեւէ լեզու պահպանվի պատշաճ մակարդակով՝ դա վերնախավի խնդիրն է այս կամ այն երկրում: Ընդսմին պետք է հասկանալ, որ պահպանելով ու զարգացնելով մեր սեփական լեզուն՝ մենք պետք է ամեն ինչ անենք, որ մեր գալիք սերունդները կարողանան շփվել, խոսել մի քանի լեզվով, այդ թվում նաեւ՝ ռուսերենով: Որովհետեւ Հայաստանի համար Ռուսաստանն առանցքային շուկաներից մեկն է: Այս տեսանկյունից շատ կարեւոր է պահպանել այն մրցակցային առավելությունները, որոնք մեզանում ստեղծվել են վերջին 90 տարում, այդ թվում նաեւ լեզուների իմացության բնագավառում:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Ով ինչքան ունի

**Ռուսաստանյան «Ֆինանս» հեղինակավոր հանդեսը հրապարակել է երկրի 500 մեծահարուստների ցուցակը: Անշուշտ որոշակի պայմանականություն կա նման հրապարակումներում, որոնք հեղինակում են տարբեր լրատվամիջոցներ կամ հետազոտական կենտրոններ: Որովհետեւ Ռուսաստանի պայմաններում միշտ չէ, որ հնարավոր է ստույգ տեղեկանալ եկամտի աղբյուրների մասին:**

**Ինչեւէ, հետաքրքրական է, որ չնայած տնտեսական ճգնաժամին, անցյալ տարի ռուսաստանցի դոլարային միլիարդատերերի (114 հոգի) ընդհանուր կապիտալը աճել է մեկ երրորդով: 500-ի մեջ «ամենաաղքատն» ունի 160 միլիոն դոլար: Եթե նկատի ունենանք, որ հրեաներն այս երկրի բնակչության մեկ տոկոսն էլ չեն կազմում, ապա կարելի է ասել, որ նրանք գերակշիռ տեղ են գրավում ցուցակում, հատկապես միլիարդատերերի առաջին տասնյակում (այստեղ, ավա՜ղ, հայեր չկան): Ուշադրություն է գրավում, որ զգալի թվով մեծահարուստ հրեաներ կրում են մուսուլմանական ազգանուններ: Քիչ չեն նաեւ մեծահարուստները, որոնց կանայք են հրեա, ինչը հրեաների համար նույն բանն է՝ ժառանգներն են հրեա: Որպեսզի այն ավանդական պատկերացումը չստեղծվի, որ աղքատները նստած հարուստների փողերն են հաշվում, երեւույթին հաղորդենք ազգային երանգ: Այսինքն՝ այդ ցուցակում քանի հայազգի գործարար մարդ կա:**

**Ռ. Հ.**

| Տեղը 2010 | Անուն-ազգանունը | Գնահատականը մլրդ $ | Գնահատականը մլրդ ռուբ. | Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 91 | Դանիլ Խաչատուրով | 0,79 | 23,9 | «Ռոսգոսստրախի» եւ մի շարք այլ ֆինանսական ու անշարժ ակտիվների համասեփականատեր |
| 92 | Սերգեյ Խաչատուրով | 0,79 | 23,9 | Դանիլ Խաչատուրովի եղբայրն ու գործընկերը |
| 93 | Նիկոլայ Սարկիսով | 0,78 | 23,6 | «Ռեսո-գարանտիի» փոխտնօրեն |
| 94 | Սերգեյ Սարկիսով | 0,78 | 23,6 | «Ռեսո» եւ «Ռեսո-գարանտի» խմբի տնօրենների խորհրդի նախագահ |
| 139 | Սամվել Կարապետյան | 0,58 | 17,5 | «Տաշիր» խմբի նախագահ եւ հիմնական սեփականատեր |
| 209 | Ռուբեն Վարդանյան | 0,39 | 11,8 | «Տրոյկա դիալոգի» տնօրենների խորհրդի նախագահ եւ հիմնական սեփականատեր |
| 215 | Տիգրան Ներսիսյան | 0,38 | 11,5 | «Բորոդինո» բազմապրոֆիլ հոլդինգի համասեփականատեր |
| 332 | Իգոր Ավանեսյան | 0,2 | 6 | «Զենիթ» բանկի համասեփականատեր, «Ցենտր կապիտալ» լիզինգային ընկերության նախագահ |
| 479 | Արտյոմ Խաչատրյան | 0,11 | 3,3 | «Sun Investments Partners» ներդրումային ընկերության տնօրենի գործընկեր |

# Օբամա. «Քադդաֆին պետք է հեռանա»

## *Ռազմական միջամտության համար անհրաժեշտ է ՄԱԿ-ի ԱԽ հավանությունը*

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆիին կոչ է արել թողնել իշխանությունը: Սպիտակ տանը կազմակերպված մամլո ասուլիսում Օբաման մասնավորապես հայտարարել է. «Բռնությունը պետք է դադարեցվի: Մուամմար Քադդաֆին կորցրել է իշխանության օրինականությունը եւ պետք է հեռանա»:

BBC-ն մեջբերում է նախագահի նաեւ այն խոսքերը, որ ԱՄՆ-ը օդանավեր է ուղարկում Լիբիայի եւ Թունիսի սահման, որպեսզի օգնի փախստականների (մեծ մասամբ օտարերկրացիների) տարհանմանը:

Բարաք Օբաման ավելացրել է, որ ԱՄՆ-ը միջազգային ընկերակցության եւ ՆԱՏՕ-ի հետ խորհրդակցում է լիբիական ճգնաժամի հաղթահարման հնարավոր տարբերակների շուրջը: Նախագահի խոսքերով, անհրաժեշտ է արագ գործելու հնարավորություն ունենալ Լիբիայում իրավիճակի վատթարացման եւ հումանիտար ճգնաժամի դեպքում: Օբաման չի բացառել ռազմական միջամտության հնարավորությունը:

Սակայն ԱՄՆ զինված ուժերի շտաբների պետերի կոմիտեի ղեկավար, ծովակալ Մայքլ Մալլենը «Ալ Արաբիա» հեռուստաալիքին տված հարցազրույցում հայտարարել է, որ Լիբիայի երկնքում նույնիսկ Քադաֆիի օդուժի թռիչքների արգելման գոտի ստեղծելու համար անհրաժեշտ է ՄԱԿ-ի ԱԽ համապատասխան բանաձեւի գոյությունը: Օրերս ընդունված ԱԽ բանաձեւը չի թույլատրում ռազմական ուժ գործադրել Լիբիայում, ընդգծել է ծովակալը:



Լիբիայում Քադդաֆիին հավատարիմ ստորաբաժանումների եւ ապստամբների մարտերը շարունակվում են: ՄԱԿ-ի փախստականների վարչությունը հաղորդում է, որ երկրից արդեն հեռացել է 180 հազար մարդ: Նրանց մեծ մասը Եգիպտոսից, Վիետնամից, Բանգլադեշից, Թաիլանդից, Կորեայից, Գանայից, Մալիից եւ Սուդանից եկած բանվորներ են: 95 հազար փախստական անցել է Եգիպտոս, 83 հազար՝ Թունիս: Մնացյալ 2 հազարը Լիբիայից հեռացել է նավերով եւ օդանավերով: Մարդու իրավունքների լիբիական լիգայի տվյալներով, փետրվարի 17-ից մինչեւ օրս երկրում սպանվածների թիվը հասնում է 6000-ի:

# Մուբարաքին կանչել են հարցաքննության

## *Նրա որդին ինքնաթունավորվել է*

Եգիպտոսի նախկին նախագահ Հոսնի Մուբարաքին կաշառակերության գործով Կահիրե են կանչել հարցաքննության: Այդ մասին հաղորդում է CNN-ը, վկայակոչելով խորհրդարանի նախկին պատգամավոր Մուստաֆա Բաքրիի հայտարարությունը:

Մուբարաքի եւ մյուս պաշտոնյաների աշխատանքի քննությունն անցկացվում է Բաքրիի նախաձեռնությամբ: Նրա խոսքերով, Մուբարաքը եկող շաբաթ պետք է գա քննիչի մոտ:

Նախկին պատգամավորը նաեւ հիշեցրել է, որ իրեն պատգամավորությունից զրկել են, երբ ինքը պատրաստել է փաստաթղթեր, որոնց համաձայն նախկին նախագահի եւ ընտանիքի անդամների հաշիվներում կուտակված է առնվազն 174 մլն դոլար:

Ծովափնյա Շարմ էլ Շեյխի շքեղ առանձնատներից մեկում բնակվող Մուբարաքին ավելի վաղ արգելել էին դուրս գալ երկրից: Նրա ամբողջ ունեցվածքը եւ հաշիվները սառեցվել էին:



Նախկին նախագահը իր փաստաբանների եւ ներկայացուցիչների միջոցով կաշառակերության մեղադրանքներն անվանել է «սարքովի եւ ոչնչով չհիմնավորված ասեկոսեներ»:

18 օր տեւած համաժողովրդական բողոքներից հետո՝ փետրվարի 11-ին Հոսնի Մուբարաքը թողել էր նախագահի պաշտոնը: Ներկայումս Եգիպտոսում իշխում է Բարձրագույն զինվորական խորհուրդը, որը երկիրը նախապատրաստում է նոր սահմանադրության ընդունմանը, ինչպես նաեւ նախագահական ու խորհրդարանական ընտրություններին:

Ինչ վերաբերում է Մուբարաքի որդիներին, նրանցից մեկը՝ Գամալը, օրերս Կահիրեում ինքնաթունավորման փորձ է արել, տեղեկանալով, որ երկրի նոր իշխանությունները ջանում են սառեցնել իր ընտանիքի հաշիվներն օտարերկրյա բանկերում: Ալժիրյան «Էշորուք» թերթի տվյալների համաձայն, խոսքը Իռլանդիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում եւ Նորվեգիայում գործող բանկերի մասին է:

Ալժիրյան թերթը գրում է, որ Գամալ Մուբարաքը թույն է խմել եւ կորցրել գիտակցությունը: Մերձավորները դիմել են անվտանգության ծառայության ղեկավարին, որը կանչել է նախկին նախագահի անձնական բժշկին: Արյան տարրալուծումը հաստատել է թունավորման փաստը: Գամալին փրկել են: Ինքնաթունավորման փորձի ստույգ օրը չի նշվում:

# Լոնդոնյան բուհի ղեկավարը հրաժարական տվեց Լիբիայի պատճառով

Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի (LSE) ղեկավար Հովարդ Դեւիսը հրաժական է տվել Մուամմար Քադդաֆիի ընտանիքի հետ իր կապերի պատճառով:

BBC-ն նշում է, որ 2009-ին LSE-ն համաձայնել էր 1,5 մլն ֆունտ նվիրատվություն ընդունել Քադդաֆիի որդի Սեյֆ ալ Իսլամի գլխավորած հիմնադրամից: Նա ավարտել էր LSE-ն եւ այնտեղ թեկնածուական թեզ պաշտպանել: Նվիրատվության ընդհանուր գումարից բուհը հասցրել էր ստանալ 300 հազար ֆունտ:

LSE-ի ղեկավարությունն արդեն հայտարարել է, որ նույնպիսի գումար կծախսվի հյուսիսաֆրիկացի ուսանողների ուսումնական դրամաշնորհների վրա:

Բացի դրանից, բուհին պատկանող ընկերությունը 2,2 մլն ֆունտի պայմանագիր է կնքել Լիբիայի տնտեսական զարգացման խորհրդի հետ: Պայմանագրի համաձայն, LSE-ում կառավարում պետք է սովորեն 400 երիտասարդ լիբիացիներ:

Մարտի 1-ին բրիտանական լրատվամիջոցները հաղորդեցին, որ կասկածներ կան Սեյֆ ալ Իսլամի ստորագրած թեզի հեղինակության հարցում: Նաեւ ենթադրվում է, որ դա գրագողություն է: LSE-ի ղեկավարությունը սկսել է ստուգել այս մեղադրանքները: LSE-ի խորհուրդը նաեւ հայտարարել է, որ մանրակրկիտ քննություն է անցկացնելու բուհի հետ Քադդաֆիի որդու բոլոր կապերը բացա-



հայտելու նպատակով եւ խոստացել է մշակել նվիրատվությունների ընդունման նոր կանոններ:

«Ես սովորեցի, որ ինձ համար ճիշտ կլինի հրաժարական տալ: Ես պատասխանատու էի բուհի հեղինակության համար, որը տուժել է», ասվում է Հովարդ Դեւիսի տարածած հայտարարության մեջ:

**ԳԱԲԱԼԱ**

# «Անկախ Ադրբեջանի համար ավելի վտանգավոր է «Կալաշնիկովը» ձեռքին զինվորը, քան մեր հողերի օկուպացված լինելը»

**«Ազգը»** մարտի 3-ի համարում տեղեկացրեց, որ Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը որոշում է կայացրել արդիականացնել ադրբեջանական Գաբալայի ռադիոլոկացիոն կայանը:

Երեկ ադրբեջանական Միլի մեջլիսում ելույթ է ունեցել «Մեծ ստեղծագործություն» կուսակցության ղեկավար, պատգամավոր Ֆազիլ Մուստաֆան:

Մուստաֆան նշել է, որ ռուսների ցանկությունը՝ արդիականացնել Գաբալայի կայանը, «խիստ անհասկանալի է». «Միգուցե ռուսներն ուզում են լրացուցիչ ուժ ներմուծել Ադրբեջան՝ արդիականացման գործընթացի անվան տակ, միգուցե նրանք ցանկանում են լրացուցիչ մեխանիզմներ ներմուծել, որպեսզի ամբողջովին վերահսկեն Ադրբեջանի ամբողջ ռազմական համակարգը: Ամեն դեպքում սա անթույլատրելի է, եւ մենք պետք է ամեն կերպ խոչընդոտենք այդ գործընթացին, քանի որ «Կալաշնիկովը» ձեռքին զինվորը Ադրբեջանի համար ավելի մեծ վտանգ է ներկայացնում, քան մեր հողերի օկուպացված լինելը», ըստ 1news.az-ի՝ հայտարարել է ադրբեջանցի քաղաքական գործիչը:

Գաբալայի կայանը Մոսկվան վարձակալում է Ադրբեջանից: Վարձակալման պայմանագիրը կնքվել է 2002-ին՝ տասը տարով (**«Ազգ»**-ի մարտի 3-ի համարում պայմանագրի կնքման տարին սխալմամբ նշվել էր 1992-ը - Հ. Ա.):

Այսինքն, հաջորդ տարի լրանում է պայմանագրի ժամկետը, եւ Ռուսաստանի վերոհիշյալ որոշումը՝ արդիականացնել կայանը թերեւս նպատակ ունի երկարացնել իր ռազմական ներկայությունը Ադրբեջանում: Մանավանդ որ Գաբալայի կայանի հրամանատարը ՌԴ ՊՆ-ի համապատասխան որոշումից հետո նշել էր. «Մենք պատրաստ ենք աշխատել այստեղ եւս 10, 15, անգամ 20 տարի նույն ռեժիմով...»:

Հ. ԱՓՅԱՆ

# Աֆղանական օպիումի 40%-ն անցնում է Իրանով ու կարող է «շարունակել իր ուղին» Վրաստանով

Իրանի հետ անցագրային ռեժիմի պարզեցումը կարող է Վրաստան թմրանյութերի մեծ հոսք առաջացնել: Այսպիսի եզրակացություն է արված, ըստ վրացական լրատվամիջոցների, ԱՄՆ պետքարտուղարության՝ թմրանյութերի միջազգային վերահսկողության առնչությամբ ամենամյա հաշվետվությունում:

«2010-ին Վրաստանը անցագրային ռեժիմի պարզեցման համաձայնագիր է ստորագրել Իրանի հետ», նշված է հաշվետվությունում, ընդգծելով, որ դեռեւս հստակ չեն այդ համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու ժամկետները:

ԱՄՆ պետքարտուղարությունը հարկ է համարել նշել. «Եթե համապատասխան ստուգում եւ զննում չապահովվեն, այդ համաձայնագիրը կարող է մեծացնել թմրանյութերի հոսքը Վրաստան»: Ըստ հաշվետվության, «Դա լիովին հնարավոր է, քանի որ աֆղանական օպիումի 40 տոկոսն անցնում է Իրանով: Լուրջ հիմքեր կան մտածելու, որ թմրանյութեր վաճառողները օգտագործում են Իրանի եւ Վրաստանի միջեւ պարզեցված տեղաշարժման նոր երթուղիները»:

Ամերիկացի փորձագետները գտել են, որ Վրաստանն իր աշխարհագրական դիրքի արդյունքում դառնում է հիմնական միջանցք Ասիայից Եվրոպա թմրանյութերի հոսքի համար: Ուստի, ըստ նույն այդ փորձագետների, Վրաստանի՝ թմրանյութերի վերահսկողության համակարգը բարեփոխումների կարիք ունի: Ա. Հ.

# ԵՄ հակաբելառուսական պատժամիջոցներին միացել է եւս 9 երկիր

Բելառուսի դեմ ԵՄ ձեռնարկած պատժամիջոցներին միացել են ուրիշ, ԵՄ անդամ չհանդիսացող երկրներ: Այդ մասին ասվում է ԵՄ արտաքին գործերի գծով գերագույն ներկայացուցչի հայտարարության մեջ: Խոսքը Խորվաթիայի, Մակեդոնիայի, Չեռնոգորիայի, Իսլանդիայի, Ալբանիայի, Բոսնիա-Հերցեգովինայի, Սերբիայի, Նորվեգիայի եւ Լիխտենշտեյնի մասին է:

Հունվարի վերջերին ձեռնարկած պատժամիջոցներով ԵՄ-ը փորձում է Բելառուսի նախագահին եւ նրա շրջապատին պատժել ընտրախախտումների եւ ընդդիմության հալածանքների համար:

ԵՄ մուտք գործելու իրավունքից զրկվել են նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն եւ նրա 150 մերձավորներ (ուժային կառույցների ղեկավարներ, դատավորներ, ընտրական կոմիտեների աշխատակիցներ, պետական ԶԼՄ-ների ներկայացուցիչներ):

ԱՄՆ-ը եւս արգելել է Բելառուսի ղեկավարների այցելությունները եւ դադարեցրել է համագործակցությունը «Բելնեւտեխիմ» պետական ընկերության ու դրա մասնաճյուղերի հետ:

Մինսկում սպառնում են պատասխանել «համարժեք միջոցներով»:

# Մրգահյութի եւ գազավորված ըմպելիքի չարաշահումը՝ գերճնշման պատճառ

Բրիտանացի եւ ամերիկացի գիտնականները մրգահյութերի եւ գազավորված ըմպելիքների չարաշահումը կապում են արյան գերճնշման զարգացման վտանգի հետ: Գերճնշումը ժամանակի ընթացքում մեծացնում է սրտանոթային հիվանդությունների վտանգը եւ կարող է դառնալ ինսուլտի եւ երիկամային անբավարարության պատճառ:

BBC-ն հաղորդում է, որ ԱՄՆ-ում եւ Մեծ Բրիտանիայում 40-59 տարեկան 2500 կամավորների հետ անցկացված գիտափորձերից եզրակացրել են, որ 1 բաժակ մրգահյութը կամ գազավորված ըմպելիքը բարձրացնում է սիստոլիկ (վերին) զարկերակային ճնշումը սնդիկի սյան 1,6 միլիմետրով, դիաստոլիկ (ստորին) ճնշումը՝ 0,8 միլիմետրով (միջին տվյալներ):

Գիտնականների խոսքերով, հետազոտության ընթացքում հատկապես խոցելի էին այն մարդիկ, որոնք շաքարից բացի մեծ քանակությամբ աղ են օգտագործում: Դա վերստին հաստատում է այն հին համոզմունքը, որ աղի չարաշահումը հանգեցնում է արյան գերճնշման զարգացմանը:

Գիտնականները կարծում են, որ գազավորված կամ մրգային ըմպելիքների անվտանգ չափաբաժինը օրական 355 միլիլիտր է:

# Մշակույթ

# Paramount-ի հայկական մթնոլորտը




## Հաջողության սկիզբ

Այս տարվա հունվարի 28-ին Սան Ֆրանցիսկոյի նշանավոր Paramount թատրոնի դահլիճը մեզ համար առանձնացավ. այն հայկական էր համերգային հնչողության մի մասով: 3400 տեղանոց սրահը լեփ-լեցուն էր մեծամասամբ օտար հանդիսականի ներկայությամբ: Եւ սա ավելի հետաքրքրական էր դարձնում տպավորությունը: Բեմում Օքլենդի սիմֆոնիկ նվագախումբն ու երգչախումբն էին՝ համերգաշրջանի երկրորդ կատարմամբ (առաջինը բացվել էր Կառլոս Սանտանայի մենահամերգով): Նշենք, որ հռչակավոր այս նվագախմբի երկացանկում առաջին անգամ ընդգրկված էին հայ կոմպոզիտորի ստեղծագործություններ: Համերգային ծրագրի առաջին մասում Բրամսի «Ռեքվիեմն» էր, երկրորդում՝ Ավետիս Բերբերյանի «Իմ մայր», «Ելի՛ր, ով հայ» վոկալ բալլադները եւ «Հերոսի ուղին» սյուիտից 2 հատված՝ Ադաջո եւ «Ճակատամարտ». այդ օրը վերջինիս կենդանի կատարման պրեմիերան էր: (Մեկ տարի առաջ ամերիկյան Սան Մաթեոյում կայացած համերգին հիշյալ ստեղծագործության այդ երկու հատվածը ներկայացվել էր Լոս Անջելեսի Մեդիա-սիթի բալետի մենակատարների կատարմամբ):

Մայքլ Մորգանը Oakland East Bay սիմֆոնիկ նվագախմբի եւ Սակրամենտոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժորն է: Նրա առաջարկով որպես մենակատար հրավիրվել էր Սան Ֆրանցիսկոյի օպերայի առաջատար տենոր Թոմաս Գլենը: Ռոք-փոփային հատվածի կատարմամբ հանդես եկավ ԱՄՆ-ում բնակվող հայաստանցի երգչուհի Անի Քրիստին:



*Ավետիս Բերբերյանը Մայքլ Մորգանի հետ*

*«Նման ջերմ ընդունելություն չէի կարող պատկերացնել: Օտարին հուզելը, ներքին աշխարհի վրա ազդելը բարդ է: Այսպիսի մակարդակի բեմերում լարվածությունը ավելի մեծ է՝ ընդունելության տեսակետից: Այդպիսի ջերմություն զարմանալի էր, պոզիտիվ զարմանքի մասին է, իհարկե, խոսքը: 120 հոգանոց երգչախումբը հայերեն էր երգում: Սա հուզիչ է: Նման նվագախմբի երկացանկում հայ կոմպոզիտորի ներկայությունն արդեն մեծ պատիվ է»*, խոստովանում է Ավետիս Բերբերյանը, որ 2,5 տարի է Հայաստանից բնակության է տեղափոխվել Միացյալ Նահանգներ, հաստատվել Սան Ֆրանցիսկոյում: Այս ընթացքի անցած գարունը իր համար առանձնակի էր Մայքլ Մորգանի հետ ծանոթությամբ եւ անսպասելի համագործակցության նրա առաջարկով: Իր ստեղծագործությունների ձայնասկավառակի տպավորությամբ ամերիկացի դիրիժորը անակնկալ որոշել է փոփոխություն կատարել նվագախմբի՝ 2011-ի արդեն հաստատված երկացանկի մեջ, մի բան, որ համաշխարհային ճանաչման նվագախմբերի ստեղծագործական պրակտիկայում շատ հազվադեպ է պատահում: Մայքլ Մորգանը, շրջանցելով ընդունված կարգը, հունվար ամսվա ծրագրում ընդգրկում է Ավ. Բերբերյանի ստեղծագործությունները՝ ընտրությունը թողնելով կոմպոզիտորին:

*«Ինձ համար ամենամեծ գնահատականը հանդիսականի անկեղծությունն էր, ասում է նա, դա արտահայտվում էր երաժշտության ներքին ըմբռնողականությամբ, երաժշտության վերապրման միջոցով իրենց հաղորդած էմոցիաներով»:*

Համերգին հետեւած համագործակցության առաջարկները տարբեր էին: Թոմաս Գլենը խոստովանեց, որ մեծ հաճույք է ստացել Օքլենդի սիմֆոնիկի հետ «Ելի՛ր, ով հայ» վոկալ-բալլադի մեկնաբանությունից եւ որ առիթի դեպքում հետագայում էլ սիրով կկատարի Բերբերյանի գործերը:

Միջազգային նշանավոր բեմում, հռչակավոր նվագախմբի հետ Ավետիս Բերբերյանի առաջին համագործակցության այս հաջողությունն, իհարկե, մեծ իմպուլսներ է հաղորդում կոմպոզիտորին, սակայն զգացնել է տալիս նաեւ հետագա ստեղծագործական պատասխանատվությունն ու լրջությունը: Համատեղ՝ նվագախմբի, երգչախմբի ու մենակատարների մասնակցությամբ ընդամենը 2 փորձ է կատարվել, բայց արդյունքը՝ հրաշալի. *«Այնտեղ ամեն ինչ հստակ է, յուրաքանչյուրը գիտի իր անելիքը, կարգապահությունը շատ բարձր մակարդակի վրա է: Երաժիշտները առավելագույնս տրվում են ստեղծագործության ներքին ոգուն»:*

Ամերիկյան նվագախմբի ու երգչախմբի համար հայկական երաժշտությունը նորություն էր. նրանք սիրեցին այդ երաժշտությունը, զգացին արեւելքի խորքից եկող մեղեդու ներքին ջերմությունը, մարդկային զգացական աշխարհի հարուստ ելեւէջները, իրենց խոսքերով, անկեղծությունը, կիրքը, երաժշտական մտածողության լայնությունը: *«Որեւէ նվագախմբի համար կարեւորը երաժշտությունը սիրելն է: Ինչպիսի գործ էլ որ լինի, ինչ մակարդակ էլ որ ունենա, միեւնույն է, եթե օրկեստրանտը չընդունեց, կնվագի պարզապես: Այդ համերգին իմ ստեղծագործությունը էմոցիոնալ ջերմությամբ կատարվեց:*

*Սա այն դեպքն է, երբ իսկապես գտնվում ես համաշխարհային կիզակետում, մշակութային քաղաքների կիզակետում: Մարտում գտնվողի զգացողություն ես ունենում, արվեստագետ-մարտիկի, որովհետեւ քեզ ուղեկցում է այն միտքը, որ ներկայացնում ես մի ողջ ժողովուրդ, մի ողջ մշակույթ»:* Եթե սրան ավելացնենք Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետի՝ ճապոնուհի Ժան Քուանի՝ համերգից հետո ընդունելության ժամանակ ասված ջերմ խոսքերը հայ մշակույթի մասին. «Անչափ սիրում եմ ձեր քաղաքը, խենթանում եմ Նորավանքի համար», ապա կարելի է պատկերացնել օրվա մթնոլորտը, հայ կոմպոզիտորի զգացական ապրումները:

Համերգի արտակարգ հաջողության վկայությունը նաեւ ամերիկյան մամուլի արագ արձագանքն էր: Ինտերնետային կայքէջերից բացի, որտեղ հանդիսականները իրենց կարծիքներն ու տպավորություններն են հայտնել, որոնցից մեկում Բերբերյանին փորձ են արել դասել ամերիկյան ժամանակակից կոմպոզիտորների շարքում, տեղի երեք թերթեր անդրադարձել են համերգային կատարմանը՝ San Francisco Chronicle, San Francisco Classic Voice, Contra Costa Times:

San Francisco Classic Voice պարբերաթերթի երաժշտագետը զուգահեռներ տանելով համերգային ծրագրի 2 բաժինների միջեւ, գրում է. *«Մինչ Բրամսի «Ռեքվիեմը» թաքնված ու աննկատ զգացումներ է արտահայտում, ապա Բերբերյանի «Իմ մայր» ստեղծագործությունը բացահայտ ու հստակ խոսք է, լայն եւ ցցուն գծերով նկարված մի կտավ, որտեղ երաժիշտը նկարում է համարձակ վրձնահարվածներով»:*



*Համերգի պահին. մենակատարներ՝ Անի Քրիստի, Թոմաս Գլեն*

*«Բերբերյանի երաժշտությունից Կենտրոնական Ասիայի էթնիկ համն է գալիս՝ ողողված չափազանց վարպետորեն գործիքավորված «հոլիվուդյան ոճի» հարմոնիաներով ու զգացողությամբ»:*

## Դրանից առաջ

Հայաստանում եւս կոմպոզիտորի ստեղծագործական կյանքը բավականին բեղմնավոր է եղել. կոնսերվատորիական կրթություն եւ աշխատանքային գործունեություն՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկում որպես համերգահյուրախաղերի բաժնի տնօրեն, Գեղագիտական կենտրոնում՝ կամերային նվագախմբի, ջազ մանկական երգչախմբի հիմնադիր, «Մետրո» թատրոնի հիմնադիրներից եւ երաժշտական ղեկավար 1989-92 թթ.: Մասնակցություն բազմաթիվ մրցույթների եւ տարբեր մրցանակներ՝ Ուկրաինայում Գլինկայի անվան մրցույթի, Չեխոսլովակիայում երիտասարդ կոմպոզիտորների միջազգային մրցույթի առաջին մրցանակակիր, 1998-ին հայաստանյան «Այո» մրցույթում՝ երկրորդ մրցանակակիր, 2000-ին «Սայաթ-Նովա» համահայկական երգի մրցանակաբաշխության գլխավոր մրցանակակիր, երաժշտական փառատոների ու բազմաթիվ մրցույթների ժյուրիի անդամ:

Բերբերյանը դասական ուղղվածության կոմպոզիտոր է, գրել է ստեղծագործություններ սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի համար: Երգարվեստում ժանրային նորամուծություն է կատարել՝ փոփ-ռոքի եւ օպերային երաժշտության տարրերի սինթեզմամբ: Ներկայացումների համար գրված մյուզիքլները իր ստեղծագործության կարեւոր մասն են եւ իրեն հարազատ ժանր: 1988-ի Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված կինոռեժիսոր Թ. Վիշնեւսկու «Տեր, փրկյա նրանց հոգիները» ֆիլմի երաժշտությունը գրել է Ավետիս Բերբերյանը: 1989-91-ին եղել է Կանադայում, երաժշտություն գրել տեղի հայկական թատերախմբի «Կալիգուլա» ներկայացման համար:

Ինչպես ինքն է ասում, ԱՄՆ մեկնելու պատճառներից մեկը ստեղծագործական ներուժը իրացնելու ավելի լայն հնարավորություններ փնտրելն էր՝ արվեստի մեծ ճանապարհներին հաստատվելու փորձը: Իր կյանքի այս փուլում փորձ է անում դուրս գալ ամերիկյան կինոերաժշտության ասպարեզ: Առաջին արձագանքը հուսադրող է. Ֆրենսիս Ֆորդ Կոպպոլայի ֆիլմերից մեկի համար արված իր երաժշտական էսքիզները ներկայացվել եւ ընդունվել են:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

**Հ. Գ. Ավետիս Բերբերյանը իրավացիորեն նկատում է, որ համերգային այս հաջողությունը, հանդիսականի արձագանքը եւ կամ ամերիկյան մամուլի անդրադարձները միայն իրեն չէ որ վերաբերում են, սա մեր արվեստի ընդհանուր հաջողությունն է: Մինչդեռ այստեղ՝ Հայաստանում, արձագանքներ գրեթե չկան (երեւում է անտարբերության փոսը փորելու ենք մինչեւ վերջ): Զրուցակիցս վկայում է, որ Հայաստանից մեկնած շատ արվեստագետներ (Սուրեն Բագրատունի, Վահրամ Սարաջյան, Եղիշե Մանուչարյան, Ալեքսանդր Չաուշյան, Կարեն Հարությունյան, Լեւոն Մուրադյան, Միխայիլ Սիմոնյան) միջազգային բեմերում լուրջ հաջողություններ են ունենում եւ գործունեություն ծավալում, որին մենք գրեթե անտեղյակ ենք:**

**Մեկուսացումից դուրս գալու ճանապարհը հայ արվեստագետները առայժմ անհատապես են բացում՝ ապավինելով սեփական տաղանդին ու անձնական հարաբերություններին: Պետական հնարավորությունները չեն ներում դրսում հայ արվեստագետին աջակցել, բայց ցավալիորեն չկա նաեւ քաղաքականություն կամ մշակված ծրագիր, նույնիսկ ցանկություն երկրի ներսում գոնե արձագանքելու, կարեւորելու ձեռք բերած հաջողությունները: Սա բարոյական քայլ է, ինչը նույնպես չի արվում: Անտարբերությո՞ւնն է պատճառը, անփութությո՞ւնը, թե՞ տգիտությունը, երբ ստվերում թողնելով ներկայիս իրական արժեքները եւ դրանց կրողներին՝ փոխարենը տարփողում ենք ազգային նկարագիրը նսեմացնող ու ճաշակ ապականող պսեւդոմշակույթ: Երբ հիմա մեզ, ավելի քան երբեք, անհրաժեշտ է ճիշտ հակառակը՝ երկրի նկատմամբ հավատ ու արժանապատվություն ներարկել, իսկ դրա միջոցներից ամենաազդեցիկը մշակույթն է, իրական, բարձր մշակույթը:**

ԼՈՒՐԵՐ

## «Իմ աչքերով, ձեր աչքերին»



Երեկ Ե.Չարենցի տուն-թանգարանում տեղի ունեցավ երիտասարդ գեղանկարիչ Հմայակ Գրիգորյանի աշխատանքների ցուցահանդեսը: Նա ունեցել է 20-ից ավելի ցուցահանդեսներ Վրաստանում, իսկ Հայաստանում առաջին անհատական ցուցահանդեսն էր:

Ցուցահանդեսին բացման խոսք ասաց արվեստաբան **Մերի Երզնկյանը**:

Մենք զրուցեցինք հեղինակի հետ:

-Ինձ համար շատ կարեւոր է իմ հայրենիքը, հողն ու ջուրը, ես շատ եմ սիրում այն: Այդ իսկ պատճառով իմ ցուցահանդեսի նյութը ջավախքյան աշխարհն է:

**- Գեղանկարչության մեջ ո՞րն է Ձեր սիրած ժանրը:**

- Սիրում եմ դասական,արվեստը, գնահատում եմ ռոմանտիկական ժանրը եւ գրագետ իմպրեսիոնիստական ոճերը: Կարեւորը ժանրը չէ, կարեւորը ստեղծագործությունն է, նրա ասելիքը:

**- Նկարիչներից ո՞ւմ եք համարում Ձեզ ուսուցիչ:**

- Սիրում եմ Գեւորգ Բաշինջաղյան, Այվազովսկի: Բոլորն ինձ համար ուսուցիչ են եւ շատ բան են տվել:

**- Եվ՝ ավանդական մի հարց, ի՞նչ պլաններ ունեք:**

- Այս ամսվա ավարտին Ջավախքի նկարիչներով փորձում ենք կազմակերպել մեծ ցուցահանդես «Հին Ջավախքը» թեմայով: Ցանկանում ենք ներկայացնել Ջավախքի նոր սերնդի աշխատանքները: Փնտրում ենք հովանավոր, ով կաջակցի մեզ դահլիճ վարձակալելու:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## «Դպրոցական մեծ հանրագիտարանը»՝ արեւմտահայերենով

**Շուտով հայկական «Դպրոցական մեծ հանրագիտարան»-ի քառահատորյակը կհրատարակվի արեւմտահայերենով: Այս մասին երեկ կայացած ասուլիսում հաղորդեց Հայկական հանրագիտարան հրատարակչության տնօրեն եւ գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանը՝ հավելելով, որ արդեն իսկ ձեռք է բերվել համապատասխան պայմանավորվածություն սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի հետ: «Սփյուռքում գործող շուրջ 500 հայկական կրթօջախներին տրամադրելու համար մենք կիրականացնենք «Դպրոցական մեծ հանրագիտարանի» թարգմանությունը՝ արեւմտահայերեն»: Այվազյանը նկատեց, որ հանրագիտարանը մեծ պահանջարկ է վայելում եւ իրենք այժմ բոլոր հատորների լրացուցիչ տպաքանակ են հրատարակում:**

**Խոսելով «Հայկական սովետական հանրագիտարան»-ի մասին՝ բանախոսը նկատեց, որ դրա վերահրատարակման անհրաժեշտությունը կա, քանի որ՝ «պետք է այն ազատել ավելորդաբանություններից եւ կուսակցական շեշտադրումներից»: Այվազյանը նշեց, որ այս հարցը պետք է համարվի ազգային ծրագիր եւ հարցով ցուցումներ պետք է տան կամ ԱԺ նախագահը, կամ երկրի նախագահը. «Արդեն 5 տարի շարունակ «Հայկական սովետական հանրագիտարանը» վերահրատարակելու առաջարկով մենք դիմում ենք ՀՀ ֆինանսների նախարարին, սակայն ստանում ենք պատասխան, որ՝ միջոցներ չկան», եզրափակեց Հովհաննես Այվազյանը:**

Հ. Ա.

ԱԶԳ

Մարզական

# Գեղեցիկ ու դիտարժան ֆուտբոլի ակնկալիքով

*Այսօր մեկնարկում է ֆուտբոլի ՀՀ 20-րդ առաջնությունը*

«Միկա»-«Շիրակ» եւ «Արարատ»-«Բանանց» հանդիպումներով այսօր կտրվի ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի հոբելյանական՝ 20-րդ առաջնության մեկնարկը: «Միկան» մրցակցին կհյուրընկալի սեփական մարզադաշտում, իսկ ահա արարատցիները, որ սեփական հարկի տակ կայանալիք հանդիպումներն անցկացնելու են «Հրազդանում», մեկնարկային խաղը կանցկացնեն Արարատի «Այգ» մարզադաշտում: Այդ նույն մարզադաշտում մարտի 6-ին Դիլիջանի «Իմպուլսը» կհյուրընկալի երկրի չեմպիոն «Փյունիկին», քանի որ Իջեւանի մարզադաշտը դեռեւս ամբողջությամբ պատրաստ չէ: Նույն օրը Կապանում նշանակված «Գանձասար»-«Ուլիս» հանդիպումը եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով հետաձգվել է ու կկայանա մարտի 24-ին:


ՖՈՏՈԼՈՒՐ

Վերջին տարիներին Հայաստանի առաջնություններն անցնում են բավական հետաքրքրական եւ անհաշտ մրցապայքարում: Կարծում ենք, որ բացառություն չի կազմի նաեւ հոբելյանական առաջնությունը: Մասնակից 8 թիմերից 7-ը հագեցած ուսումնամարզական հավաքներ են անցկացրել արտերկրում, մի շարք ստուգողական հանդիպումներում ստուգել են ֆուտբոլիստների պատրաստվածության մակարդակը, համալրել են կազմերը: Ինչ վերաբերում է «Արարատին», ապա թեեւ թիմը նախապատրաստվել է միայն Հայաստանում, սակայն ծանոթ լինելով Արկադի Անդրեասյանի մարզչական հմտություններին, հուսով ենք, որ արարատցիներն էլ արժանի մրցակից կլինեն մյուս թիմերի համար:

Անցած գրեթե 20 տարիների ընթացքում շատ բան է փոխվել հայկական ֆուտբոլում: Զգալիորեն բարելավվել են մարզումային պայմանները, հզորացել են ֆուտբոլային ակումբները, որոնց մի մասը ժամանակակից մարզաբազա ու մարզադաշտ ունի, ֆինանսական առումով էլ ներկայիս թիմերը չեն համեմատվի 20 տարվա առաջվա ակումբների հետ: Սակայն այս ամենով հանդերձ, խիստ անհանգստացնում է Հայաստանում ֆուտբոլային թիմերի սակավաթվությունը: Համեմատության համար նշենք, որ 1992-ին առաջին անգամ անցկացված Հայաստանի ազգային առաջնությունում միայն բարձրագույն խմբում հանդես էր գալիս 24 թիմ: Իսկ այսօր, ավելի նպաստավոր պայմաններում Հայաստանում ընդամենը 8 թիմ է մնացել: Մրցաշրջանի մեկնարկից առաջ լուծարվեց «Կիլիկիան»: Դեռ լավ է, որ անցած մրցաշրջանի կեսերից «Շիրակը» վերջապես ֆինանսապես կայուն սեփականատեր ունեցավ, այլապես Գյումրիի թիմն էլ կարող էր «Կիլիկիայի» տխուր ճակատագրին արժանանալ:

Ինչեւէ, այսօր սա է մեր ֆուտբոլային իրականությունը: Ֆուտբոլային նոր մրցաշրջանի մեկնարկը միշտ էլ յուրատեսակ տոն է ֆուտբոլիստների, մարզիչների ու ֆուտբոլասերների համար: Հուսանք, որ այդ տոնական տրամադրությունը կպահպանվի ողջ մրցաշրջանի ընթացքում, ականատես կլինենք գեղեցիկ ու դիտարժան ֆուտբոլի եւ որ ամենակարեւորն է, իր հաջող ելույթներով բոլորիս կուրախացնի Հայաստանի ազգային հավաքականը՝ Եվրո-2012-ի ուղեգիր նվաճելով:

## Անդրե Դիրելը կշարունակի կարիերան



**27-ամյա ամերիկացի բռնցքամարտիկ Անդրե Դիրելը բժիշկներից թույլտվություն է ստացել շարունակել մարզական իր կարիերան: Նա մտադիր է ռինգ վերադառնալ առաջիկա 3-4 ամիսներին:**

**Հիշեցնենք, որ Անդրե Դիրելը Super Six մրցաշարի շրջանակներում Արթուր Աբրահամի հետ մենամարտում նոկաուտի էր ենթարկվել, որի հետեւանքով նրա մոտ առողջական խնդիրներ էին ծագել: Այս ամենի պատճառով նա հրաժարվել էր մրցաշարի հետագա մասնակցությունից:**

**Այժմ ամեն ինչ բարեհաջող է ավարտվել, ուստի Անդրե Դիրելը հույս ունի տարեվերջին մենամարտել 2-րդ միջինքաշային կարգում IBF-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Լուչանո Բուտեի հետ: Բացի այդ նա վստահեցրել է իր երկրպագուներին, որ Անդրե Ուորդի հետ չկայացած մենամարտն անպայման կանցկացվի:**

## Պելեն կողմ է Պլատինիի թեկնածությանը

Ֆուտբոլի արքա Պելեն գտնում է, որ ՈւԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին անհրաժեշտ բոլոր հատկանիշներն ունի ՖԻՖԱ-ի նախագահի պաշտոնում ընտրվելու համար: Ընտրությունները տեղի են ունենալու հունիսի 1-ին: Գործող նախագահ Յոզեֆ Բլատերից բացի, այդ պաշտոնի հավանական թեկնածուներն են Միշել Պլատինին եւ Ասիայի ֆուտբոլի կոնֆեդերացիայի նախագահ Մոհամեդ բին Համամը: Սակայն վերջիններս պաշտոնապես դեռեւս չեն հաստատել իրենց թեկնածության առաջադրման փաստը:

Պելեն նաեւ հայտարարել է, որ ինքը ցանկություն չունի հավակնելու Բլատերի պաշտոնին, որը բավական խիստ քննադատության էր ենթարկվել 2018-ի եւ 2022-ի աշխարհի առաջնությունների մրցավայրերի ընտրությունների ժամանակ: 70-ամյա Պելեն ՖԻՖԱ-ի կոմիտեներից մեկի անդամ է: Նրա համոզմամբ, Բրազիլիան ազնիվ մրցապայքարում է հաղթել 2014-ի աշխարհի առաջնության մրցավայրի ընտրություններում:

## ՖԻՖԱ-ն հարուստ կազմակերպություն է

ՖԻՖԱ-ի նախագահ Յոզեֆ Բլատերը հայտարարել է, որ կազմակերպության շահույթը վերջին 4 տարիներին կազմել է 631 մլն դոլար: Ցյուրիխում կայացած ՖԻՖԱ-ի նիստում նա ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի ֆինանսական հաշվետվությունն է ներկայացրել: Կոմերցիոն գործունեությունից եւ հեռուստաիրավունքների վաճառքից ստացված եկամուտը 4 մլրդ 189 մլն է, ծախսերը՝ 3 մլրդ 558 մլն: Ընդ որում՝ 2010-ին Հարավաֆրիկյան Հանրապետությունում անցկացված աշխարհի առաջնությունից ավելի մեծ եկամուտ է ստացվել, քան 4 տարի առաջ Գերմանիայում կայացած ֆուտբոլի համաշխարհային ստուգատեսից:

ՖԻՖԱ-ն իր եկամուտներից բաժին է հանում նաեւ միջազգային ֆեդերացիայի անդամ 208 երկրների ազգային ֆեդերացիաներին: «Գոլ» ծրագրով նրանցից յուրաքանչյուրին տարեկան 1 մլն դոլար կհատկացվի:

Բացի ֆինանսական հաշվետվությունից, նիստում հայտարարվել են նաեւ առաջիկա խոշոր մրցաշարերի անցկացման վայրերը: Աշխարհի կանանց հերթական առաջնությունը կանցկացվի 2015-ին Կանադայում: 2013-ին Թուրքիան կհյուրընկալի Եվրոպայի երիտասարդական առաջնության եզրափակիչ փուլի մասնակիցներին: Երկու տարի անց մրցաշարը կանցկացվի Նոր Զելանդիայում: Մինչեւ 17 տարեկանների Եվրոպայի պատանեկան առաջնությունները նույն ժամկետներում կանցկացվեն համապատասխանաբար Արաբական Միացյալ Էմիրություններում ու Չիլիում: Մինչեւ 20 տարեկանների կանանց Եվրոպայի առաջնությունները կանցկացվեն 2012-ին Ուզբեկստանում, 2014-ին՝ Կանադայում:

Հաստատվել է նաեւ 2014-ին Բրազիլիայում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգրերի բաշխման կարգը: Բացի բրազիլացիներից, առաջնությանը կմասնակցեն եվրոպական 13 եւ աֆրիկյան 5 երկրների հավաքականներ: Ասիային հատկացվել է 4 ուղեգիր, եւս մեկը կարող են նվաճել Օվկեանիայի ներկայացուցչի հետ կայանալիք անցումային խաղերում: Հարավամերիկացիները, բացի Բրազիլիայից, 4 տեղ կստանան եզրափակիչ փուլում: Եվս մեկ ուղեգիր կարող են նվաճել ԿՈՆԿԱԿԱՖ-ի գոտում 4-րդ տեղը զբաղեցրած հավաքականի հետ անցումային խաղում:

ՇԱԽՄԱՏ

## Հաղթողին կանվանի ավարտական տուրը

Դոհայում ընթացող շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության նախավերջին՝ 10-րդ տուրն անհաջող էր հայ շախմատիստուհիների համար: Էլինա Դանիելյանը պարտվեց Պիա Կրամլինգին՝ չկարողանալով կանխել անցողիկ զինվորի առաջխաղացումը: Չնայած պարտությանը, Էլինան 7,5 միավորով պահպանեց առաջատարի դիրքը:

Մրցաշարում անկայուն ելույթ է ունենում Լիլիթ Մկրտչյանը, որը սեւերով խաղում էր Էլինա Դանիելյանին հետապնդող Համպի Կոներուի հետ: Լիլիթին չհաջողվեց կասեցնել հնդիկ շախմատիստուհու հաղթարշավը: Վերջինս մեկ ձիու առավելություն ուներ, բացի այդ մատային սպառնալիքներ էր ստեղծել մրցակցի արքայական թեւում: Այս ամենի արդյունքում Մկրտչյանը ստիպված էր արդեն 44-րդ քայլին կանգնեցնել ժամացույցը: 10 հնարավորից վաստակած 4 միավորով Լիլիթը Սյու Յուհուայի, Մարթա Ֆիեռոյի եւ Բատսույագ Մոնգոնտուլի հետ բաժանում է 7-10-րդ տեղերը: Իսկ ահա Համպի Կոներուն վաստակեց 7 միավոր եւ Մարի Սեբագի հետ բաժանում է 2-3-րդ տեղերը: Վերջինս հաշտություն կնքեց Մայա Չիբուրդանիձեի հետ:

5-ական միավոր են վաստակել վրացի շախմատիստուհիներ Մայա Չիբուրդանիձեն ու Նանա Ձագնիձեն, որը սպիտակներով պարտվեց մրցաշարի հետնապահ Չժու Չենին: Անտուանետա Ստեֆանովան ու Բատսույագ Մոնգոնտուլը հաշտություն կնքեցին, Սյու Յուհուան հաղթեց Մարթա Ֆիեռոյին:

Այսօր կայանալիք 11-րդ տուրի հանդիպումներով կավարտվի շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության վերջին՝ 6-րդ փուլը: Հաղթողի հարցը կորոշվի Դանիելյան-Ստեֆանովա, Մոնգոնտուլ-Սեբագ, Չժու Չեն-Կոներու պարտիաներում: Լիլիթ Մկրտչյանի մրցակցուհին կլինի Մարթա Ֆիեռոն:

## Քոթանջյանն անդրանիկ պարտությունը կրեց

**Իրանում ընթացող շախմատի միջազգային մրցաշարի 7-րդ տուրն անհաջող էր Տիգրան Քոթանջյանի համար: Նա անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով ադրբեջանցի Գադիր Հուսեյնովին: 7 տուրից հետո Քոթանջյանը վաստակած 5 միավորով ընթանում է 22-րդ տեղում:**

**Աղյուսակը շարունակում է գլխավորել Հոլանդիան ներկայացնող Սերգեյ Տիվյակովը, որը նոր հաջողության հասավ: Նա հաղթեց Ալեքսանդր Մոիսեենկոյին եւ վաստակեց 6,5 միավոր: 6-ական միավորով առաջատարին հետապնդում են Գադիր Հուսեյնովը, Ալեքսեյ Ֆյոդորովը, Նիջաթ Մամեդովը եւ Եվգենի Գլեյզերովը: 8-րդ տուրում Քոթանջյանը կմրցի Ամիր Կովսարինիայի հետ:**

## Տոմսերն էլ թանկացան

**Մարտի 26-ին «Հանրապետական» մարզադաշտում կկայանա ֆուտբոլի Եվրոպայի 2012-ի առաջնության Հայաստան-Ռուսաստան ընտրական հանդիպումը, որի նկատմամբ ֆուտբոլասերների հետաքրքրասիրությունը չափազանց մեծ է: Ուստի սպասվում է, որ այդ օրը մարզադաշտը լեփ լեցուն կլինի: Երեւի հենց դրանով էլ պայմանավորված է այդ հանդիպման տոմսերի ավելի բարձր գինը նախորդների համեմատ: Արեւմտյան տրիբունայի տոմսն արժե 7 հազար դրամ, արեւելյանը՝ 5 հազար: Մյուս 2 տրիբուններում տեղ զբաղեցնողները պետք է վճարեն 3 հազար դրամ: Նշենք, որ ընտրական նախորդ հանդիպումների տոմսերը 1000 դրամով էժան էին:**

**Տոմսերի վաճառքը կսկսվի մարտի 10-ից: Ընդ որում յուրաքանչյուր ֆուտբոլասեր 4 տոմսից ավելի գնել չի կարող: Մարտի 26-ին կայանալիք հանդիպումը սկսվելու է ժամը 19-ին:**

## Ֆիշերի այրին միակ ժառանգորդն է

Ռեյկյավիկում ավարտվել է Բոբի Ֆիշերի ժառանգության հարցով դատավարությունը: Դատական հայց էին ներկայացրել Ֆիշերի ազգականները, որոնք ցանկանում էին աշխարհի չեմպիոնի այրուն՝ ճապոնուհի Միյոկո Վատային զրկել ժառանգությունից, պատճառաբանելով, որ վերջինս շախմատիստի օրինական կինը չի եղել: Ինչպես պարզեց դատարանը, Ֆիշերի եւ Միյոկոյի ամուսնությունն օրինական է եղել, ուստի նա ճանաչվել է աշխարհի չեմպիոնի միակ ժառանգորդը:

Այժմ Ֆիշերի ազգականները պարտավոր են որպես փոխհատուցում ճապոնուհուն 41 հազար եվրո վճարել: 2008-ին կյանքից հեռացած Բոբի Ֆիշերի ժառանգությունը մոտ 2 մլն դոլար է գնահատվում: Բացի նրա այրուց, ազգականներից ու սիրուհուց, ժառանգությանը հավակնում է նաեւ ԱՄՆ-ի կառավարությունը՝ հույս ունենալով իր երկրի նախկին քաղաքացու ունեցվածքից ստանալ նախկինում չվճարված հարկերը:

## Ներկայացվել է չեմպիոնների լիգայի եզրափակիչի գնդակը

Լոնդոնում տեղի է ունեցել չեմպիոնների լիգայի եզրափակիչի գնդակի ներկայացման պաշտոնական արարողությունը, որին մասնակցել են մրցաշարում պայքարը շարունակող լոնդոնյան երեք ակումբների ֆուտբոլիստները՝ Սամիր Նասրին («Արսենալ»), Սալոմոն Կալուն («Չելսի») եւ Ջերմեյն Դեֆոն («Տոտենհեմ»): Գնդակի վրա պատկերված է չեմպիոնների լիգայի լոգոտիպը: Մասնագետների կարծիքով եզրափակիչի գնդակը համապատասխանում է բոլոր չափանիշներին, բարձր որակ եւ հուսալիություն ունի: Հիշեցնենք, որ չեմպիոնների լիգայի եզրափակիչ հանդիպումը կայանալու է Լոնդոնում, մայիսի 28-ին, «Ուեմբլի» մարզադաշտում:




## Վայրն ու ժամկետները փոփոխվել են

**Փոփոխվել են շախմատի աշխարհի կանանց թիմային առաջնության անցկացման վայրն ու ժամկետները: Այդ մրցաշարը նախատեսված էր անցկացնել նոյեմբերի 20-30-ը Անթալիայում: Ըստ նոր խաղացանկի, շախմատիստուհիները մրցավեճի կբռնվեն դեկտեմբերի 18-28-ը Թուրքիայի Մարդին քաղաքում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով



# Սպասենք «Սայաթ-Նովա» օպերայի պրեմիերային

*Մարտի 6-ին եւ 9-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա հայտնի կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերայի պրեմիերան:*

*Օպերան առաջին անգամ բեմադրվել է 1969 թ. մայիսին: Բեմադրության գեղարվեստական ղեկավարն էր Վարդան Աճեմյանը, բեմադրող դիրիժորը՝ Արամ Քաթանյանը:*

*Արամ Խաչատրյանը Ալեքսանդր Հարությունյանին ասել է. «Հիացած եմ քո օպերայով, դու Սայաթ-Նովայի երգարվեստը մեյդանից բարձրացրեցիր բեմ»:*

*«Սայաթ-Նովա» օպերայի նոր բեմականացումը սպասվում էր անցած տարի, սակայն Ալեքսանդր Հարությունյանը դժգոհ է եղել վրաց ճանաչված բեմադրիչ Գիզո Ժորդանիայի ռեժիսորական մոտեցումներից, ինչի պատճառով էլ աշխատանքները դադարեցվել էին: Կային նաեւ նյութական պատճառներ: Իսկ այս տարի «Սայաթ-Նովա» օպերան բեմադրում է ռեժիսոր Արամ Սուքիասյանը: Օպերան բաղկացած է երեք մասից, լիբրետոյի հեղինակը Հակոբ Խանջյանն է, բեմադրող դիրիժորը՝ Յուրի Դավթյանը, բեմադրության ու զգեստների նկարիչը՝ Արաքսի Քուչուկյանը, որ Ալեքսանդր Հարությունյանի թոռնուհին է: Երաժշտական մասի խմբավարն է Կարեն Սարգսյանը, դիրիժորը՝ Կարեն Լավչյանը:*

*«Սայաթ-Նովա» օպերայի մասին նախ զրուցեցինք բեմադրող ռեժիսորի՝ Արամ Սուքիասյանի հետ:*

**- Խնդրում եմ ներկայացրեք Սայաթ-Նովայի կերպարի եւ նրա ժամանակաշրջանի Ձեր մեկնաբանությունը:**

- Մենք հավատարիմ ենք մնացել ժամանակաշրջանին, մոդեռն լուծումներ բեմադրության մեջ տեղ չեն գտել, մնացել ենք դասական լիբրետոյին հարազատ, օպերան բեմադրված է դասական սկզբունքներով:

**- Գուցե եւ տեղին չէ համեմատությունը, սակայն Սայաթ-Նովայի կերպարին ժամանակին անդրադարձել են ռեժիսոր Կիմ Արզումանյանը «Սայաթ-Նովա» ֆիլմում, այնուհետեւ մեծանուն կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը «Նռան գույնը» ֆիլմում, որտեղ ավելի շեշտված էին խորհրդանիշ-պատկերները: Ինչպիսի՞ն են Ձեր մոտեցումները:**

- Այս բեմադրության վրա աշխատել են եւս 2 բեմադրող ռեժիսորներ, շուրջ 3 տարի: Հեղինակի եւ առաջին ռեժիսորի որոշ անհամաձայնությունների պատճառով՝ շարունակությունը չի կայացել եւ ավարտին չի հասել:

Մինչ ինձ հրավիրելը, արդեն հստակեցված էին Սայաթ-Նովայի կերպարային մոտեցումները, այնպես էլ բեմադրական աշխատանքները, նկատի ունեմ դեկորացիան, ռեկվիզիտները: Անգամ ամենամեծ ցանկության դեպքում, չէի կարող այլ մեկնաբանություն տալ: Հիմնական աշխատանքը կատարված էր, ես ավելի շատ ավարտին եմ հասցրել գործը:

**- Որքան էլ դժվար է անկեղծ պատասխանել, սակայն կխնդրեի մի քանի խոսք դերասանական կազմի մասին:**

- Մեծամասամբ երիտասարդներ են: Անշուշտ, նրանք դերասանական վարպետությամբ հասուն չեն, այդ խնդիրը միշտ էլ եղել է: Իհարկե, պետք չէ օպերային արվեստի դերասանին համեմատել դրամատիկական թատրոնի դերասանի հետ:



Այստեղ, իհարկե, առաջնահերթությունը ձայնի որակն է, երգերի գրագետ կատարումը: Ստեղծագործական կազմից կարելի է առանձնացնել երգչախմբին, որ բավական բարձր մակարդակի է:

**- Պրն Սուքիասյան, իսկ մինչ այս ի՞նչ բեմադրություններ եք կատարել:**

- Մեծ մասամբ մասսայական հանդիսություններ, երաժշտաթատերական ծրագրեր, պետական կառավարական համերգներ: Դասական օպերայում առաջին անգամ եմ բեմադրություն անում: Ես նաեւ երկու ռոք օպերայի հեղինակ եմ:

**- Ի՞նչ եք կարծում, Ձեր ռեժիսորական մտահղացումները ամբողջությամբ իրականացե՞լ են:**

- Ոչ, իհարկե, ոչ:

Մենք նաեւ զրուցեցինք Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն **Կամո Հովհաննիսյանի** հետ:

**- Ձեր կարծիքով «Սայաթ-Նովա» օպերան հաջողվա՞ծ է:**

- Գնահատականը պրեմիերայից հետո կտա մեր հանդիսատեսը: Այս ներկայացումը շատ երկար տեւեց, որոշ պատնությաններով, դժվարություններով՝ եկանք հասանք պրեմիերային, իհարկե անկախ մեզանից: Կարծում եմ, պատվով դուրս եկանք այդ իրավիճակից: Մարտի 6-ին եւ 9-ին ներկայացումը կհանձնենք հանդիսատեսի դատին:

**- Ի՞նչ կասեք ռեժիսորական աշխատանքների մասին:**

- Մեր դժվարությունները հեղինակի եւ ռեժիսորների միջեւ տարակարծություններն էին:

**- Ի՞նչ կասեք կազմակերպչական աշխատանքների մասին:**

- Օպերային թատրոնի արդեն որերորդ ներկայացումը հաստատում է, որ կազմակերպչական աշխատանքները մեր թատրոնում դրված են լավ հիմքերի վրա: Ներկայացումը ավարտին հասցնելու համար շատ ծառայություններ են մասնակցում, միմյանց շաղկապված, առանց մեկը մյուսի անհնար է լիարժեք աշխատանք, պիտի ասեմ, որ բոլոր ծառայությունները գործել են բավարար:

**- Որքա՞ն գումար է կազմել բեմադրության ծախսը:**

- Մոտավորապես 50 մլն. դրամ:

Հանդիպեցինք նաեւ Ալեքսանդր Հարությունյանի դստեր, «Սայաթ-Նովա» օպերայի պրոդյուսեր **Նարինե Հարությունյանի** հետ (որ մեր դիտարկմամբ ներկայացման ռեժիսորի գործառույթները նույնպես իր վրա էր վերցրել): Նա ասաց. «Ռեժիսուրան պատրաստ էր, ամեն ինչ պատրաստ էր: Այժմ ես եմ վազվզում, զբաղվում կազմակերպչական գործերով, իսկ ինքը՝ ռեժիսորը ոչ մի բանով չի զբաղվում: Իմ բոլոր մտահղացումները փորձեցի իրականացնել եւ դեռ աշխատում եմ խաղի վրա, փորձում եմ մի քիչ աշխուժացնել: Ես իրեն (ռեժիսորին) բերեցի, որպեսզի նա աշխատի դերասանների եւ երգչախմբի հետ, այդ հարցում ինձ օգնեց երգչախմբի ղեկավարը: Գիզո Ժորդանիան ավելի շատ է աշխատել, քան նա: Ես եմ պրոդյուսերը եւ իրավունքներ ունեմ: «Սայաթ-Նովա» օպերան առաջին անգամ բեմադրել է 1969թ. Վ. Աճեմյանը, 20 տարի օպերան եղել է բեմում: Անկախացումից հետո դադարեցվեց, եւ հիմա մենք ցանկանում ենք վերականգնել: Հայրս ինձ նշանակեց այս օպերայի պրոդյուսեր, իսկ դուստրս՝ Արաքսի Քուչուկյանը բեմի եւ հագուստների նկարիչն է: Շատ դժվար էր գտնել ռեժիսոր: Սկզբում ես ռեժիսոր էի գտել Մոսկվայից... Այնուհետեւ գնացի Թբիլիսի, առաջարկեցին Գիզո Ժորդանիային, բայց նա տարիքով մարդ է եւ ես ժամանակ չունեի սպասելու, թե նա ինչ էր անել... Գործի 90 տոկոսը արդեն արել էինք: Ժորդանիայի համար ամեն ինչ գրված էր... Հետո ես գտա նոր ռեժիսոր՝ Արամ Սուքիասյանին: Օպերայի կազմակերպիչները, աշխատակազմը, Յուրի Դավթյանը եւ երգչախմբի ղեկավարը՝ Կարեն Սարգսյանը ինձ շատ օգնեցին բեմադրությունը իրականացնել»:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

*ՄԵԿՆԱՐԿ*

# Orange-ի նորարարության մրցույթը հայ ուսանողների համար

## *Մրցանակակիրը 6-ամսյա վճարվող պրակտիկա կանցնի Ֆրանսիայում*




**Orange-ը մեկնարկեց 2011թ. նորարարության մրցույթը Երեւանի պետական համալսարանի եւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) երեւանյան եւ մարզային մասնաճյուղերի ուսանողների համար: Մրցույթի արդյունքում լավագույն նորարարական գաղափարի հեղինակը ճանաչված ուսանողը կմեկնի Ֆրանսիա՝ 6-ամսյա վճարվող պրակտիկայի Orange-ի գիտահետազոտական լաբորատորիաներից մեկում եւ կաշխատի նորարարական նախագծերի վրա:**

**«Հայ երիտասարդները ունեն նոր գաղափարներ առաջ քաշելու հսկայական պոտենցիալ, ցանկություն եւ գիտելիքներ: Այս երիտասարդներին հաճախ պակասում է միայն մի բան՝ փոքրիկ հնարավորություն, փայլուն նախագծերի հեղինակը դառնալու եւ իրենց դրսեւորելու համար, եւ մենք ուզում ենք տալ նրանց այդ հնարավորությունը: Orange Արմենիան մեծ միջազգային խմբի մասն է կազմում, եւ մեր գործունեությունը Հայաստանում կտա առավելություն հայ ուսանողներին՝ կատարելագործվելու մեր խմբի բազմաթիվ գիտահետազոտական լաբորատորիաներից մեկում: Վստահ եմ, որ հաղթողը կվերադառնա Հայաստան որպես պատրաստի մասնագետ եւ օգտակար կլինի ինչպես իր համալսարանին, այնպես էլ երկրին», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան երեկ կայացած ասուլիսի ժամանակ:**

**Երկու համալսարանների ռեկտորները ողջունել են Orange-ի այս նախաձեռնությունը եւ ամեն կերպ աջակցել մրցույթի անցկացմանը՝ հասկանալով կարեւորելով հայ ուսանողների համար այսօրինակ աշխատանքային պրակտիկայի ընձեռած ապագա հնարավորությունները, ինչպես նաեւ հետագայում գիտական աշխատանքի պատրաստվող մասնագետների համար նորանոր հմտությունների ձեռքբերումը:**

**Մրցույթին կարելի է մասնակցել՝ մինչեւ ապրիլի 20-ը գրանցվելով Orange-ի պաշտոնական վեբկայքում հատուկ ստեղծված կայքէջում եւ էլեկտրոնային ձեւաչափով ուղարկելով նախագիծը եւ կենսագրությունը:**

**11 հոգուց կազմված ժյուրին, որի կազմում են Orange Արմենիայի հայ եւ արտասահմանցի 7 մասնագետներ, Orange Lab-երի 2 ներկայացուցիչ, ինչպես նաեւ՝ մեկական ներկայացուցիչ ԵՊՀ-ից եւ ՀՊՃՀ-ից, կգնահատի ներկայացված գաղափարները ըստ հետեւյալ չափանիշների. նորարարական, հետաքրքրական, օգտակար եւ հեշտ կիրառվող: Գաղափարը պետք է վերաբերի հեռահաղորդակցության ոլորտին (ցանց եւ ինժեներիա, ծրագրային ապահովում եւ հավելվածներ, շարժական կապի նորարարական եղանակներ, սարքավորումներ եւ այլն) եւ ներկայացված լինի անգլերեն կամ ֆրանսերեն լեզուներով: Այս լեզուներից մեկի բավարար տիրապետումը անհրաժեշտ է հետագայում Ֆրանսիայում պրակտիկան անցնելու համար: Մրցույթի հաղթողի անունը կհրապարակվի Orange-ի կայքում մայիսի 20-ին:**

**Մրցույթի մասնակցության մասին մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել www.orangearmenia.am/innovation-prize/ կայքէջը:**

**Շինարարական հիմնարկությունում աշխատելու համար պահանջվում են մանրահատակի վարպետներ:**
**Հեռ.՝ 091-046-222 (Արամ)**

**Հայտարարություն**

Սույն թվականի մարտի 9-ին, ժամը 12:00–ին ՀՀ ք. Երևան «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի շենքում տեղի կունենա Ստեփանակերտի ջրամատակարարման համակարգի Վարարակնի ջրատարի ջրընդունիչ հանգույցի վերակառուցման և ջրատարի վերջնամասի տեղափոխման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

**Հայտարարություն**

Սույն թվականի մարտի 15-ին, ժամը 14:00–ին ՀՀ Սյունիքի մարզի Իշխանասարի գյուղապետարանում տեղի կունենա «Արշակյաններ Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Իշխանասարի հրաբխային ավազների հանքավայրի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակարան, ընդ. մակերեսը՝ 103.6 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան,Աջափնյակ համ., Մազմանյան փող., 2 շենք, բն. 29: Մեկն. գինը՝ 21000000 դրամ:
- Բնակարան, ընդ. մակերեսը՝ 45,8 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Արաբկիր համ., Բաբայան փող., 36 շենք, բն. 18: Մեկն. գինը՝ 18500000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 05.04.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. օր ժամը 11.00– 20.00: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 4.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: